



ԶՄԻԱԾԻՒ

1973

Դ



Լ

ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱՐԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Կոպիել

1973





ԲՈՎԱՆԳՐՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի քարոզը Փրկչի հրաշափառ սուրբ Հայրության տոնի առթիվ Մայր տաճարում	3
Փրկչի հրաշափառ և սուրբ Հայրության տոնի առթիվ Ամենայն Հայոց Եպարքոսը Պատրիարք և կաթողիկոս, Նորին Խորր Օծություն Տ. Տ. Վաղգեն Ա Հայրապե- տի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների ղեկավարների միջև փոխանակված ողջույնի հետա- գրերն ու գրությունները	6
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի հրաշափառ և սուրբ Հայրության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրա- պետական երեք Աթոռներին, թեմակալ քույր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին	10
Սուրբ գրական ըմբերումներ	12
Երգ Տեառն Ներսիսի Օծորհալոյ հայոց կաթողիկոսի ասացելալ ի պաշտաման գիշերոյ Նորին Տեառն Ներսիսի Օծորհալոյ հայոց կաթողիկոսի երգ աղօթական ի դեմս սրբոյ Երրորդութեան ճակ իւրաքանչիւրոյ դիմի Երրորդութեան առանձնակի	14
Փրկչի հրաշափառ Հայրության տոնի առթիվ հանդիսավոր սուրբ պատարագ և հայ- րապետական քարոզ Մայր տաճարում	15
ԻՍԱՅԻ ԱԹՈՐՈՒՄ	17
ԻՍԱՎԵԼ ՍԱՐԿԱՎԱԳ ՊԵՏՐՈՍՅԱՆ—Սուրբ Գրիգոր Նարեկացու հիշատակին նվիր- ված երկու հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում	18
ԱՐԱՇՆ Ծ. ՎՐԴ. ԲԵՐԲԵՐՅԱՆ—Ակնարկ ս. Էջմիածնի հատուկ մի քանի հոգևոր ուղանակների մասին	20
ՆԱՐԵԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԾԱԶԱՐՅԱՆ—Խաղաղության պաշտպանության համաքրիս- տոնական համաժողովի աշխատանքային կոմիտեի նոր նստաշրջանը	25
Ֆրանսիայի և Արևմտյան Եվրոպայի Հայաստանյայց եկեղեցիների խորհրդակցական ժողով Փարիզի հայոց առաջնորդաւորանում	32
Հանգիստ գերաշնորհ տ. Մաշտոց եպիսկոպոս Թաքիրյանի	35
Ա. Հ.—Մահ պրոֆ. Հակոբ Մուրյան Սիրունու	38
Խորեք Հայաստանյայց եկեղեցու թեմերից	40
Խորեք քույր եկեղեցիներից	43
«Էջմիածին» ամսագրի մատենագիտությունը	45
Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի	48

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված 1, արտադրության 2/IV 1978 թ.: Ստորագրված է տպագրության 16/V 1978 թ.:

Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 263

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1978 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐՔԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՋԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ
ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(1973 թ. ապրիլի 22)

«Խաղաղության ձայն հնչեցաւ
Սէր յընդհանուրս սփռեցաւ»:

Հավատալով ժողովուրդ հաշոց,

Ջատիկ է այսօր: Սուրբ Հարության զանգերը վերստին ավետում են հո-
րիզոնից հորիզոն՝ «Քրիստոս յարեալ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց
և յարութեամբն իրով մեզ զկեանս պարզեաց»:

Քաղցր է բոլորիս համար, ամեն տարի զարման լուսաբացին, բանալ մեր
հոգիները՝ ընդունելու մեծ ավետիսը իբրև զերազույն մխիթարություն: Ամ-
բողջ մի տարի ապրում ենք ու սպասում այս օրվան, ողջունելու բարի լուրը,
աներեր հավատքով՝ որ եթե ճշմարտապես հարյավ Քրիստոս ի մեռելոց, ապա
մեր սրտերում վառ է մնալու հույսը թե մեր հոգիները ևս կոչված պիտի լինեն
մահվամբ մահը հաղթելու:

Քրիստոնեական մեծ հույսն է այս, որ ահա երկու հազար տարիներից ի
վեր մխիթարում է և ոգեշնչում մարդկային բազմությունները ամենուր:

Քրիստոնյայի կյանքը լուսավորում է, իմաստավորում է և բեղմնավո-
րում՝ հոգու անմահության հրաշքի հույսով: Հույսը՝ հարության հրաշքի: Ահա
հրաշքը մեծ հույսի:

Քրիստոսի հարության ավետիսը, մարդկանց բերում է ոչ միայն հավետ
ապրելու հույսը կյանքի մյուս ափին, այլ նաև պատգամը՝ ապրելու խաղա-
ղության և սիրո մեջ այս աշխարհում: Հարուցյալ Քրիստոս ի մեջ մեր հայո-
նը վերջով, մեր հոգու աշխարհում հնչում է ձայնը խաղաղության և սփռվում՝
լույսը սիրո:

Արդար և խաղաղ կյանք աշխարհի վրա և Լոբաշյակյան սեր մարդկանց ու ժողովուրդների միջև, ահա այն պատգամը որի կենսագործման համար Քրիստոս աշխարհ եկավ և մարդկության մեզքը բարձած՝ խաչ բարձրացավ:

Միտո և գութի զգացումներով տոգորված իր մամնների հանդեպ, և խաղաղարար բարի գործերով, մարդիկ պիտի արդարանան ու արժանի դառնան երկնից արքայության: «Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին» պատգամում է մեծ վարդապետը:

Ամեն տարի, Քրիստոսի Ծննդյան ու Հարության տոների երջանիկ առիթներով, խոսում ենք, փառաբանում ենք սիրո և խաղաղության պատգամը, ոչ միայն որովհետև դրանք նվիրական պատվիրաններն են սուրբ Ավետարանի, այլ նաև նրա համար որ մեր օրերի աշխարհը ամեն բանից վեր և ամեն բանից առաջ կարիք ունի խաղաղ մի գոյավիճակի և մարդկանց միջև եղբայրական հարաբերությունների ամրապնդման:

Հակառակ վհատեցուցիչ մի շարք ժխտական դրսևորումների, մենք մնում ենք հաստատ այն հավատքի վրա՝ թե մարդկությունը անհրաժեշտորեն զգում է դեպի նվաճումը՝ միջազգային կյանքի խաղաղ գոյակցության և բարեկամական գործակցության: Ոչ միայն հոգով վատառողջ, այլև մտքով տկար պետք է լինել՝ չտեսնելու համար թե արդի աշխարհի գիտության և արդյունաբերության, ընկերային հարաբերության և հաղորդակցության միջոցների հսկայաքաղ զարգացումները մի կողմից, տնտեսական և քաղաքական շահերով ժողովուրդների փոխադարձ ենթակայությունը մյուս կողմից, տակավ փոփոխում են և պետք է փոփոխեն մի շարք ազգային և միջազգային հին հասկացություններ: Ընկերային-տնտեսական հեղաշրջումների, գիտության և տեխնիկայի նվաճումների և աշխարհը կործանելու կարող զենքերի սպառնալիքների հեռանկարների առջև, ժողովուրդները պետք է հստակ տեսնեն թե բոլորը անհատի անբաժան մի միասնություն են կազմում, մի ճակատագրով, մի ապագայով, փրկության մի ուղիով: Այդ ուղին, խաղաղ գոյակցության և համատեղ գործակցության ուղին է:

Այս հաստատումները կատարելով, և տեսնելով մեր ժողովրդի ու հայրենիքի արդի ապահով իրավիճակը, Մեզ խորապես մխիթարված ենք զգում որպես առաջին հոգևոր սպասավորը մի փոքր ազգության, որ անցյալում ահավոր փորձության և մահատակության է ենթարկվել մեծ պետությունների ռազմական բախումների ժամանակ: Հարկ կա՝ արդյոք հիշելու մեր ազգային մեծագույն աղետը 1915 թվականին, երբ հայության կեսը զոհ գնաց քաղաքակիրթ աշխարհի գրեթե անտարբեր նայվածքի տակ: Մեզանից ոչ ոք չպետք է մոռացության տա մեր անցյալի այդ ողբերգությունը: Հայ ժողովրդի զավակները, ուր էլ որ գտնվեն, մանավանդ սփյուռքի պայմանների մեջ, պարտին ապրել ու գործել իմաստությամբ և ողջմտությամբ, հեռու մնալով անհավասարակշիռ արարքներից և զգացական ծայրահեղ դրսևորումներից:

Այսպես է որ հայերը առավել սուրբ ապրումներով աճեջ պետք է պահեն նվիրական հիշատակը Ապրիլյան եղեռնի մահատակների, այսպես է որ նրանք առավել արդար իրավունքով պետք է սպասեն որ աշխարհի խղճի ու պատմության դատաստանի առջև չմոռացվեն երկու միլիոն հայ քրիստոնյաները, որոնք զոհվեցին, քանզի կամեցան սեփական մի հայրենիք ունենալ և այնտեղ ազատ ապրել:

Եվ որովհետև այսօր Զատիկ է, տոնը մահվամբ մահը հաղթելու, սիրելի հավատացյալներ մեր որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, Մենք հրավեր ենք կարդում բոլորիդ՝ ձեր հոգիների հայացքը ուղղելու դեպի մեր

զերածնված երկիրը Հայաստան, իրականացած երազը մեր հերոսների և նահատակների, զերագույն մխիթարությունը և ուրախությունը մեր ժողովրդի, սիակ գրավականը մեր ազգային կյանքի գոյության ու հառաջդիմության, սիակ գրավականը ապագա նոր նվաճումների:

Հարգանք և հավերժական լույս մեր բյուրավոր նահատակների հիշատակին: Հարգանք և փառք մեր քաջերին և հերոսներին, որոնք ընկան հալածատառնական պաշարի արյունոտ ճանապարհի վրա: Հարգանք և փառք մեր հարազատ ժողովրդին և մայր երկրին, հատկապես մեր հայաստանցի պալկներին, որոնք Սարդարապատը կերտեցին, որոնք վերականգնեցին հոգար տարի առաջ կործանված հայոց պետությունը և որոնք, իբրև քաղաքացիները հայոց վերածնված պետության, ավելի քան հիսուն տարիների իրենց չարքաշ աշխատանքով ու ստեղծարար ճիգերով, վերաշինեցին Մայր Հայաստանը ամենայն հայոց՝ խաղաղության, անվտանգության և ազգային սեփական ծաղկման պայմաններում, սովետական եղբայրացած ազգությունների հզոր միության մեջ:

Մահվամբ մահը հաղթելու և վերածնվելու հույսը իր սրտում ամուր ծրարած, մեր ժողովուրդը մեր օրերում կարողացավ հասնել փրկության ափին:

Արդ, ցնծացեք և ուրախ եղեք, հարազատ զավակներ Մեր, քանզի ընդմիշտ անցան օրերը վշտի, խավարի, եկան նոր օրեր՝ լուսի ու երգի, օրեր կառուցման, օրեր վերելքի, նվաճումների, օրեր՝ իրականացման արդար իղձերի, ազնիվ երազանքների:

Փառք մեր նախնյաց սուրբ հավատքին և հավետ ապրելու կամքին:

Փառք լույս հարության Փրկչին մերո Հիսուսի Քրիստոսի, այժմ և հավիտյան. ամեն:





ՓՐԿԶԻ ՀՐԱԾԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.
ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ
ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՅԼ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՐԱԳՐԵՐՆ ՈՒ
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոռմեական կաթոլիկ եկեղեցու քահանայապետ, Նորին Սրբություն
ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հում),

Կոստանդնուպոլսի հունաց տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),

Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),

Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի հունաց ուղղափառ եկեղեցու
Պատրիարք, Նորին Սրբություն ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ
(Ալեքսանդրիա),

Երուսաղեմի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԲԵՆԵԳԻԿՏՈՍ Ա-ԻՆ (Երուսաղեմ),

Ղպտի ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Ալեքսանդրիա),

Անտիոքի և Համայն Արևելքի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն ԷԼԻԱՍ Դ-ԻՆ (Դամասկոս),

Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲՈՒՆԱ ԹԵՈՖԻԼՈՍԻՆ (Ադիս-Աբեբա),

Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն
ԲԱՍԻԼԻՈՍ ՕԳԵՆ Ա-ԻՆ (Զոթայամ),

Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
ԴԱՎԻԹ Ե-ԻՆ (Թբիլիսի),

Ռուսին օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

Ժ Ո Ւ Ս Տ Ի Ն Ի Ա Ն Ի Ն (Բուխարեստ),

Ռուլդար օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

Մ Ա Զ Ս Ի Մ Ի Ն (Սոֆիա),

Անտիոքի և Համայն Արևելքի մարոնիտ Պատրիարք, Նորին Սրբություն

Կարդինալ Պ Ո Ղ Մ Ե Ո Ւ Շ Ի Ի Ն (Բեյրութ),

Անտիոքի և Համայն Արևելքի հույն կաթոլիկ եկեղեցու Պատրիարք,

Նորին Սրբություն Մ Ա Զ Ս Ի Մ Ո Ս Ե Հ Ա Զ Ի Մ Ի Ն (Դամասկոս),

Անտիոքի ասորի կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն

Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Ա Ն Տ Ո Ւ Ա Ն Հ Ա Յ Ե Կ Բ-ԻՆ (Բեյրութ),

Քենտրբերիի Արքեպիսկոպոս, Համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և

միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն Մ Ա Յ Զ Ղ Ռ Ե Մ Զ Ի Ի Ն

(Լոնդոն),

Աթենքի և Համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն

Հ Ե Ր Ո Ն Ի Մ Ո Ս Ի Ն (Աթենք),

Մերքիայի և Համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն

Հ Ե Ր Մ Ա Ն Ի Ն (Բելգրադ),

Վարշավայի և Համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն

Վ Ա Ս Ի Ղ Ի Ի Ն (Վարշավա),

Պրագայի և Համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ,

Նորին Գերաշնորհություն Գ Ո Ր Ո Յ Ե Ի Ն (Պրագա),

Հայ կաթողիկե եկեղեցու Պատրիարք, Նորին Ամենապատվություն

Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Պ Ե Տ Ր Ո Ս Ժ Զ Պ Ա Թ Ա Ն Յ Ա Ն Ի Ն (Բեյրութ),

Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն

Մ Ա Կ Ա Ր Ի Ո Ս Ի Ն (Նիկոզիա),

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար

դոկտ. Ֆ Ի Ղ Ի Պ Փ Ո Թ Ը Ր Ի Ն (Ժնև),

Վատիկանի պետական քարտուղար, Նորին Ամենապատվություն

կարդինալ Ժ Ա Ն Վ Ի Ղ Լ Ո Յ Ի Ն (Վատիկան),

Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն

կարդինալ Ֆ Ր Ա Ն Յ Կ Յ Ո Ն Ի Գ Ի Ն (Վիեննա),

Փարիզի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն

կարդինալ Ֆ Ր Ա Ն Ս Ո Ւ Ա Մ Ա Ր Տ Ի Ի Ն (Փարիզ),

Քրիստոնեական միության քարտուղարության նախագահ,

Նորին Ամենապատվություն կարդինալ Ժ Ա Ն Վ Ի Ղ Լ Բ Ր Ա Ն Դ Ս Ի Ն

(Վատիկան),

Մարսելի Արքեպիսկոպոս, գերաշնորհ

Ռ Ո Ժ Ե Է 2 Ե Գ Ա Ր Ա Յ Ի Ն (Մարսել),

Լատվիական ՍՍՀ ավետարանական-լուսերական եկեղեցու Արքեպիսկոպոս,
 Նորին Գերագանցությունն Յ. Պ. ՄԱՏՈՒԼԻՍԻՆ (Ռիգա),
 Լատոնական ՍՍՀ ավետարանական-լուսերական եկեղեցու Արքեպիսկոպոս,
 Նորին Գերագանցությունն ԱԼԵԲԵԴ ՏՈՈՄԻՆԳԻՆ (Տալին),
 Լիջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միությանն ճախագահ,
 Վերապատվելի ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ (Բեյրութ),
 Ճրանչիսկյան միաբանությանն կուստոդ
 ԷՐՄԻՆԻՈՒՆԿԱՐԻՆ (Երուսաղեմ),
 Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի գլխավոր քարտուղար
 դոկտ. ԿԱՐՈՒՄՏՈՒՆ (Պրագա),
 Իրաքի պապական նվիրակ, Գերաշնորհ
 ԺԱՆՌՅՈՒՊԻՆ (Բաղդադ),
 Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ հայր
 ՊՈՂՈՍ Վարդապետ ԱՆԱՆՅԱՆԻՆ (Վենետիկ),
 Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ հայր
 ԳՐԻԳՈՐԻՍ Վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),
 Վերապատվելի ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵԼՎԱՃՅԱՆԻՆ (Մարսել),
 Վերապատվելի ՍԵՆԵՋԵՐԻՄ ՍՅՈՒԼԱՀՅԱՆԻՆ (Նյու-Յորք):

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Ձերդ Սրբությունն,

Մեր Տիրոջ և Փրկչի սուրբ Հարության ավետիսը երջանիկ առիթ է Մեզ
 հաճար եղբայրական հարգալից սիրով ողջունելու Ձերդ Սրբությամբ, մաղթե-
 լով Ձեզ հովվապետության երկար տարիներ փալուն իրագործումներով՝ ի
 պայծառություն ձեր պատմական մեծ եկեղեցու և ի հոգևոր շինությունն ձեր
 հավատացյալ ժողովրդի:

Աղոթող ենք ման, որ սուրբ Հարության շնորհներով առավել լուսավոր-
 վեն աշխարհը հաճայն և ժողովուրդները բոլոր, գտնելու հաճար իրավ ճանա-
 պարհը խաղաղ ու արդար գոյակցության և միջազգային համագործակցու-
 թյան:

«Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ» (Փիլիպ. Գ 9), Ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա

ԵԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. ԷԶՄԻԱԾԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Փրկչի հրաշափառ և ուրբ Հարության շնորհավորական գրություններին ի պատասխան ստացվել են թույր եկեղեցիների հոգևոր լիցեների և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների՝ ղեկավարների՝ այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է լքիստոմեական եղբայրության ու համագործակցության սրտագին ոգին թույր եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանում Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՈՒ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ
ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ
ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ,
ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Սուրբ Հարության ավետիսով, ուրախ ենք ձեզ ողջունելու և հարուցյալ Փրկչի Իջման սուրբ սեղանից հղելու երկնառաք օրհնություն տիրախնամ Աթոռից եկեղեցիներին, քարեջան հոգևոր սպասավորներին և համայն Մեր հավատացյալ զավակներին, Մեր սրտից բխած ամենաջերմ մաղթանքներով հանդերձ:

Սուրբ Հարության շնորհները թող առատապես բաշխվեն համայն մեր հավատացյալ ժողովրդին ի շինություն հոգևոր կյանքի, համրապնդումն մեր Մայր եկեղեցու միության և ի կենսագործումն ձեր կրոնական, մշակութային և բարեսիրական աստվածահաճո իղձերի:

Հարուցյալ Տիրոջ շնորհներով թող լուսավորվեն մանավանդ աշխարհը համայն ու ժողովուրդները բոլոր, գտնելու համար իրավ ճանապարհը խաղաղ ու արդար գոյակցության և համերաշխ գործակցության:

«Խաղաղություն ընդ եղբարս. և շնորհք ընդ ամենեսին ոչք սիրեն զՏեր մեր Յիսուս Քրիստոս անկեղծութեամբ» (Եփես. Զ 28—24), ամեն:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԵԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՀԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Եվ նրանք առան նրան և տարան: Եվ խաչափախոր նա ինքն էր վերցրել և բարձրանում էր այն տեղը, որի անունն էր Գազաթի, իսկ երրայններեն կոչվում էր Գողգոթա, որտեղ և խաչը հանեցին նրան ու նրա հետ երկու ուրիշների՝ այս և այն կողմից, իսկ մեջտեղում՝ Հիսուսին: Պիղատոսը մի տախտակ էլ գրեց և դրեց խաչի վրա. և գրված էր. «Հիսուս Նազովրեցի՝ հրեից թագավոր»: Այդ տախտակը հրեաներից շատերը կարդացին, որովհետև այն տեղը, ուր Հիսուս խաչվեց, քաղաքին մոտ էր (և գրված էր երրայններեն, լատիներեն և հունարեն): Հրեաների քահանայապետները Պիղատոսին ասացին, «Մի՛ գրի՛ր հրեից թագավոր, այլ թե նա ասաց՝ Թագավոր եմ հրեից»: Պիղատոսը պատասխանեց. «Ինչ որ գրեցի, գրեցի»:

Իսկ զինվորները, երբ Հիսուսին խաչը հանեցին, վերցրին նրա զգեստները և չորս մաս արեցին. յուրաքանչյուր զինվորի՝ մեկ մաս: Իսկ քանի որ պատմութանը առանց կարի էր, վերևից ներքև ամբողջովին հյուսած շուրջանակի, ուստի միմյանց ասացին. «Այդ չպատռենք, այլ դրա վրա վիճակ գրենք, ում որ ելնի», որպեսզի կատարովի գրվածք, որ ասում է. «Իմ զգեստները բաժանեցին իրար մեջ և իմ պատմութանի վրա

վիճակ գցեցին»: Զինվորներն այս բանն արեցին:

ՈՐԴԻ ԵՎ ՄԱՅՐ

Իսկ Հիսուսի խաչի մոտ կանգնած էին նրա մայրը և նրա մորաքույրը՝ Կոնովպասի կին Մարիամը և Մարիամ Մագդաղենացին: Երբ Հիսուս տեսավ մորը և այն աշակերտին, որ մոտ էր կանգնած, որին նա սիրում էր, մորն ասաց. «Ո՛վ կին, ահա՛ քո որդին»: Ապա աշակերտին ասաց. «Ահա՛ քո մայրը»: Եվ այդ պահից աշակերտը նրան իր մոտ առավ:

Այնուհետև Հիսուս, գիտեցալով, թե ահա ամեն ինչ կատարված է, որպեսզի կատարվի գրվածք, ասաց՝ ծարավ եմ: Եվ այնտեղ քացախով լի մի աման կար, ու նրանք լեղախառն քացախով մի սպունգ թրջեցին և այն դրին եղեգի ծայրին ու մոտեցրին նրա քերանին: Երբ Հիսուս լեղախառն քացախը քերանն առավ, ասաց. «Ամեն ինչ կատարված է»: Եվ գլուխը խոնարհեցնելով՝ հոգին ավանդեց:

ԳԵՂԱՐԴԻ ՀԱՐՎԱՆԸ

Իսկ քանի որ ուրբաթ էր, որպեսզի մարմինները չմնան խաչի վրա մինչև շաբաթ օրը, որովհետև այն շաբաթվա օրը մեծ էր, հրեաները Պիղատոսին աղաչեցին, որ կու-

րեն նրանց սրտները և վերցնեն նրանց: Ջիւլիորները եկան և առաջինի սրտները կտարեցին, նույնպէս է մյուսինը, որ նրա նետ խաչ էր հանկել: Բայց երբ եկան Հիսուսի մոտ և տեսան, որ նա արդեն մեռած էր, նրա սրտները չկտարեցին, այլ զինվորներից մեկը տեգով խրեց նրա կողերը, և իսկույն արյուն և ջուր ելավ: Եվ ով այն տեսավ, վկայեց. և նրա վկայությունը ճշմարիտ է, և նա գիտե, որ ճշմարիտ է ասում, որպեսզի դուք էլ հավատաք: Այս պատահեց, որպեսզի կատարվի գրվածը, թե՛ նրա ոսկորը չպիտի փշրվի: Եվ դարձյալ մյուս գրվածն ասում է. «Պիտի նայեն նրան, ում խոցեցին»:

ՀԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԸ

Այնուհետև՝ Հովսեփը, որ արիմաթիացի էր և Հիսուսի ծածուկ աշակերտն էր հրեաների արհիւ Պիլատոսին աղաչեց, որ Հիսուսի մարմինը վերցնի: Եվ Պիլատոսը հրաման տվեց. ուստի եկան և նրան վերցրին: Եկավ և Նիկողեմոսը, որ առաջին անգամ գիշերով Հիսուսի մոտ էր եկել, և քերեց մոտ հարյուր լիտր զմուռս՝ հալվելի հետ խառնած: Վերցրին Հիսուսի մարմինը և պատեցին կտավներով՝ խնկերով հանդերձ, ինչպես որ հրեաների սովորությունն էր՝ պատել: Եվ այն տեղում, ուր նա խաչվեց, պարտեզ կար. և այդ պարտեզում՝ մի մոտ գերեզման, որի մեջ երբեք որեւէ մեկը չէր դրված: Եվ քանի որ գերեզմանը մոտ էր, հրեաների ուրախ պատճառով, այնտեղ դրեցին Հիսուսին:

ԹԱԺՈՒՐ ԳԵՐԵԶՄԱՆԸ ԵՎ ՀԻՍՈՒՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Եվ շաքաթյա առաջին օրը Մարիամ Մագդաղենացին առավոտյան արշալույսին գերեզման է գալիս և տեսնում է քարը գերեզմանի դռնից վերցված: Ապա վազում է և գալիս Սիմոն Պետրոսի և այն մյուս աշակերտի մոտ, որին Հիսուս սիրում էր, ու նրանց ասում է. «Տիրոջը վերցրել են գերեզմանից, և չգիտենք, թե ո՛ւր են դրել նրան»: Պետրոսը և մյուս աշակերտը ելան և գերեզման էին գալիս: Երկուսով միասին վազում էին, բայց մյուս աշակերտը առաջ անցավ Պետրոսից և ավելի շուտ վազեց ու առա-


ջինը գերեզման եկավ: Եվ կտաճալով՝ տեսավ, որ կտավները այնտեղ էին, բայց ներս չտալ: Եկավ նաև Սիմոն Պետրոսը, որ նրա ետևից էր գալիս. մտավ գերեզմանը և տեսավ, որ կտավները այնտեղ էին, և լարշամակը, որ նրա գլխին էր, մյուս կտավների հետ չէր, այլ առանձին ծալված, մի կողմ էր: Այն ժամանակ մտավ և մյուս աշակերտը, որ ավելի առաջ էր եկել գերեզման. տեսավ ու հավատաց. քանի որ դեռ չգիտեին գրվածքը, թե՛ մեռելներից պետք է հարություն առնի: Աշակերտները վերադառնալով գնացին իրենց տեղերը:

ՀԻՍՈՒՍ ԵՐԵՎՈՒՄ Է ՄԱՐԻԱՄ ՄԱԳԴԱՂԵՆԱՑՈՒՆ

Բայց Մարիամը կանգնած էր գերեզմանի դուրսը ու լաց էր լինում, և մինչդեռ լաց էր լինում, կռացավ դեպի գերեզմանը և տեսավ երկու հրեշտակներ, սպիտակների մեջ, որոնք նստել էին՝ մեկը՝ սնարին, և մյուսը՝ ոտքերի մոտ, այնտեղ, ուր Հիսուսի մարմինն էր եղել: Եվ նրանք նրան ասացին. «Ո՛վ կին, ինչո՞ւ ես լալիս»: Նա նրանց ասաց. «Որովհետև իմ տիրոջը գերեզմանից վերցրել են, և չգիտեմ՝ նրան ուր են դրել»: Երբ այս ասաց, դեպի ետևի կողմը դարձավ և տեսավ Հիսուսին, որ կանգնած էր. բայց չէր իմանում, թե Հիսուս է: Հիսուս նրան ասաց. «Ո՛վ կին, ինչո՞ւ ես լալիս, ո՞ւմ ես փնտրում»: Նրան այնպես թվաց, թե պարտիզայանն է. և ասաց նրան. «Տե՛ր, եթե դու ես նրան վերցրել, ասա՛ ինձ՝ ուր ես դրել նրան, որովհետև ես նրան պիտի վերցնեմ»: Հիսուս նրան ասաց՝ Մարիա՛մ: Եվ նա դարձավ ու եբրայեցերեն նրան ասաց՝ Ռարրու-նի՛ (որ թարգմանվում է՝ վարդապետ): Հիսուս նրան ասաց. «Ինձ մի՛ պահիր, քանի որ դեռ Հորս մոտ չեմ բարձրացել. ուրեմն գնա՛ դու իմ եղբայրների մոտ ու նրանց ասա՛, որ ես բարձրանում եմ դեպի իմ Հայրը և ձեր Հայրը, դեպի իմ Աստվածը և ձեր Աստվածը»: Մարիամ Մագդաղենացին եկավ ու աշակերտներին պատմեց, թե ինքը Տիրոջը տեսել է, և նա իրեն այս բաներն էր ասել:

(Նոր Կտակարան, Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1988, Ավետարան ըստ Հովհաննեսի, էջ 858—868):





Ե Ր Գ

ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԾՆՈՐՀԱԼԻՈՅ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՍԱՑԵԱԼ Ի ՊԱԾՏԱՄԱՆ ԳԻՇԵՐՈՅ

Յիշեսցուք ի գիշերի զանում քո, Տէր:

Բխեսցեն սիրտք մեր զքան բարի, և լեզուք մեր պատմեսցեն զգործս երկնաւոր թագաւորիդ:

Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանեսցուք զքեզ, Տէր:

Զաղօթս մեր տացուք քեզ, Տէր, ի գաւիթս քո ի մէջ նոր երուսաղէմի:

Ի գիշերի համբարնցուք զձեռս մեր սրբութեամբ առ քեզ, Տէր:

Ի ձայն գոհութեան, ամենայն հոգիք, օրհնեցէք զՏէր:

Զարթի՛ք, փառք իմ, զարթի՛ք, և ես զարթեայց առաւօտուց. ալելուիա:

Զարթի՛ք ընդ զուարթունս, մանկունք վերինն Սիօնի. ալելուիա:

Զարթի՛ք, որդիք լուսոյ, ի յօրհնութիւն Հօրն լուսոյ. ալելուիա:

Զարթի՛ք, փրկեալք արեամբ, և տուք զփառս փրկողին. ալելուիա:

Զարթի՛ք, նոր ծողովուրդք՝ նոր երգս առեալ նորոգողին. ալելուիա:

Զարթուցեալքս ի զքաղմանէ գիշերային հանգստենէ:


Ծնորհեսցէ մեզ մարդասէր Տէր մխիթարութիւն և ի սիտիանս եկեղեցւոյ:

Ահիւ և դողութեամբ կացցուք ի յաղօթս:

Եկեալ խոստովանեսցուք զյանցանս:

Եւ զտցուք ի Զրիստոսէ զքաւութիւն և զմեծ զողորմութիւն:





ՆՈՐԻՆ

ՏԵԱՌԵՆ ՆԵՐՍԻՍԻ ԾՆՈՐՀԱԼԻՈՅ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒԴԻԿՈՍԻ
Ե Ր Գ

ԱՂՕԹԱԿԱՆ Ի ԴԷՄՍ ՍՐԲՈՅ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ
ՄԱՆ

ԻԻՐԱՔԱՆՉԻՐՈՅ ԴԻՄԻ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԻ

Առաւօտ լուսոյ, արեգակն արդար,
առ իս լոյս ծագեա՛ւ:
Բոլսումն ի Հօրէ, բոլխեա՛ւ ի հոգւոյս
բան քեզ ի հաճոյս:

Գանձո՞ղ ողորմութեան, գանձի՞դ ծածկելոյ
գտող զիս արա՛ւ:
Դուռն ողորմութեան, դաւանողիս քա՛ց,
դասեցո՞ւ վերնոցն:

Երբեակ միութիւն, եղելոց խնամող,
և ինձ ողորմեա՛ւ:
Ջարթի՛ր, Տէ՛ր, յօգնել, զարթո՞ւ գթմբեալս,
զուարթնոց նմանիլ:

Էդ Հայր անկիզբն, էակից Որդի,
է միշտ սուրբ Հոգի:
Ընկա՛լ զիս, գթած, ընկա՛լ ողորմած,
ընկա՛լ, մարդասէր:

Թագաւոր փառաց, թողութեանց տուող,
թո՛ղ ինձ զյանցանս:
Ժողովող բարեաց, ժողովեա՛ւ և զիս
ժողովս անդրանկաց:

Ի քէն, Տէ՛ր, հայցեմ, ի մարդասիրել
ինձ քժշկութիւն:
Լե՛ր կեանք մեռելոյս, լոյս խաւարելոյս,
լուծաճող ցաւոյս:

Խորհրդոց դիտող, խաւարիս շնորհեա՛ւ
խորհուրդ լուսաւոր:
Մոռունդ Հօր ծոցոյ, ծածկելոյս ստուերաւ
ծագեա՛ւ զլոյս փառաց:

Կենարար Փրկիչ, կեցո՞ւ գմեռեալս,
կանգնեա՛ւ զգլորեալս:
Հաստեա՛ւ հստատով, հաստատեա՛ւ լուսով,
հիմնեցո՞ւ սիրով:

Ջայնիս աղաչեմ, ձեռօքս պաղատիմ,
ձի՞ր բարեաց շնորհեա՛ւ:
Ղամբարամբ լուսոյ, դեկավար ճարտար,
դօղեալս ամբացո՛ւ:

Ճառագայթ փառաց, ճանապարհ ինձ ցո՛յց,
ճեպել ի յերկինս:
Միածինդ Հօր, մո՛յճ զիս յառագաստ
մաքուր հարսանեացոյ:

Յորժամ գաս փառօք յահագին աւուրն,
յիշեա՛ւ զիս, Քրիստոս:
Նորոգող հմութեանց, նորոգեա՛ւ և զիս,
նորոգ զարդարեա՛ւ:

Շնորհատու բարեաց, շնորհեա՛ւ զբաւո-
թիւն,
շնորհեա՛ւ զթողութիւն:
Ուրախացո՛ւ, Տէ՛ր, ոգւոյս փրկութեամբ:
ոյր վասն եմ ի սուգ:

Չար մշակողին, չար սերմանց հորին
չորացո՛ղ պատույն:
Պարզևիչ քարեաց, պարզևեա՛ իմոց
պարտեացս թուլութիւն:

Ջուր շնորհեա՛ աչացս, ջերմ հեղույ ար-
տոսը,
ջնջել գյանցանս:
Ռետինդ քաղցու, ուսմ հոգոյս արքո՛,
ռահ ցոյց ինձ լուսոյ:

Սէր անուն Յիսուս, սիրով քով ճմլեա՛
սիրտ իմ քարեղէն:
Վասն գթութեանդ, վասն ողորմութեանդ,
վերստին կեցո՛ղ:

Տենչալոյդ տեսեամք տո՛ր ինձ յագենալ,
Տէր Յիսուս Քրիստոս:
Րաբունդ երկնաւոր, բոտեա՛ գաշակերտս
յամից երկնայնաց:

Յօղ արեան՝ քո, Տէ՛ր, ցօղեա՛ ի հոգիս,
ցնծասցէ անձն իմ:
Իծեալս մեղօք, լիծեալ աղաչեմ,
լիսել ինձ քարիս:

Փրկիչ բոլորից, փութա՛ զիս փրկել
փորձութեանց մեղաց:
Քաւիչ յանցանաց, քաւեա՛ զօրհնաքանս,
քեզ երգել գլխոս:

Սուրբ Աստուածածնին քարեխօսութեամբն
յիշեա՛, Տէր, և ողորմեա՛:





ԺՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՔԱՐՈՋ ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ

Ապրիլի 22-ին, կիրակի.—Ջատիկ. Յա-
րութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Արտակարգ աշխուժություն է տիրում
մայրավանքի շրջակայում. դեռևս վաղ ա-
ռավոտից հավատացյալների խումբերան
քաղմությունը փութացել էր ներկա գտնվելու
առավոտյան ժամերգությանը:

Օրը սովորականից պայծառ էր և արևոտ:
Ամենուրեք խիճդ և ուրախություն:

Ժամը 11-ին գվարթորեն դողանքում են
Մայր տաճարի զանգերը, և սկսվում է ս.
պատարագի արարողությունը:

Ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը,
շրջապատված քարձրաստիճան հոգևորա-
կաններով և սփյուռքահայ ուխտավորնե-
րով, եկեղեցական թափոռով առաջնորդվում
է Մայր տաճար:

Ջատկական ս. պատարագը մատուցում է
Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ
եպս. Սանթրույանը:

Ս. պատարագի արարողությունը մեծ ո-
գեվորությամբ կատարում է Մայր տաճարի
երգչախումբը՝ դեկավարությամբ Խորեն
Մելիսանջյանի:

«Հայր մեր»-ից առաջ, օրվա սուրբ խոր-
հրդի համապատասխան, Վեհափառ Հայ-
րապետը բովանդակալից քարոզ է խոսում,
որը հաջորդ օրը, ապրիլի 23-ին, երեկոյան
ժամը 23.30-ին, ձայնասփռվում է Երևանի
ռադիոկայանից:

Հայրապետական քարոզը տպագրվել է
«Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ
8):

Ս. պատարագի արարողությանը ներկա
են լինում Գերագույն հոգևոր խորհրդի,
Վերստուգիչ հանձնաժողովի անդամները,
հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը
և այլ հրավիրյալներ:


Ս. պատարագին ներկա են լինում նաև
ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած
ֆրանսահայերի դիմադրական շարժման
մասնակից հայ վետերանների խումբը, Մայր
Աթոռի քարերարներ տեր և տիկին Գևորգ
Պազրճյանը, տեր և տիկին Կարպիս Զորաշ-
յանը՝ Փարիզից, լիբանանահայեր, կանա-
դահայեր, որոնցից շատերը ստանում են
սուրբ հաղորդություն:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայ-
րապետը եկեղեցական թափոռով առաջ-
նորդվում է Վեհափառ՝ ճանապարհին օրհ-
նելով հավատացյալների քաղմությանը:

Վեհափառն Վեհափառ Հայրապետը ող-
ջունում է ներկայությունը սփյուռքահայերի
և մանավանդ Փարիզից ժամանած դիմա-
դրական շարժման խմբի ներկայացուցիչ-
ների, ոգեկոչում հիշատակը Ապրիլյան ե-
ղեռնի մեր ճախատակների և Սարդարապա-
տի ճակատամարտի զոհված հայ հերոսնե-
րի՝ շեշտելով, որ Սովետական Մայր Հա-
յաստանում հայ ժողովուրդը կարողացավ
իր ճախատակությունը վերածել հաղթանակի
և ազգային վերածնության:

Բոլոր ներկաները հերթով համբուրում են
Վեհափառ Հայրապետի ս. Աջը և ստանում
Նրա օրհնությունները:

Օրվա հանդիսությունը վերջանում է Վե-
հափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Ապրիլի 1-ին, կիրակի.—Ե կիրակի քառասորդական պահոց (Գատառորին).

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Տիրան արք. Կյուրեղյանը՝ «Եթե և յԱստուծոյ ոչ երկնչիմ, և ի մարդկանէ ոչ ամաչեմ, գոնէ վասն աշխատ առնելոյ զիս այրոյն՝ արարից նմա դատ» (Ղուկ. ԺԸ 4—5) քննաքննով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

..

Ապրիլի 8-ին, կիրակի.—Ջ կիրակի քառասորդական պահոց (Գալստեան).

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Տիրան արք. Կյուրեղյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզում է տ. Մասիս արք. Գալստյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

..

Ապրիլի 15-ին, կիրակի.—Ծաղկազարդ.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Աղան վրդ. Բալետզյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Ծաղկազարդի խորհրդի Ռոզնոր նշանակության մասին:

Երեկոյան ժամը 17-ին Մայր տաճարում ավանդական հանդիսությամբ և Մայր տա-

ճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի նախագահությամբ կատարվում է «Դոմքացեք»-ի կարգը:

..

Ապրիլի 16-ին, երկուշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ Գ. Ջեհյայանի, մեկշաբաթյա հանգստի է մեկնում Դիլիջան՝ Հայաստանի երգահանների միության հանգստյան տուն:

Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ է վերադառնում կազդուրված ապրիլի 21-ին, շաբաթ օրը:

..

Ապրիլի 18-ին, չորեքշաբթի.—Հոգևոր ճեմարանի ուսանողությանը արձակուրդ է տրվում զատկական տոների առիթով, մինչև մայիսի 3-ը:

..

Ապրիլի 19-ին, հինգշաբթի.—Առաջ հինգշաբթի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես քհն. Մարությանը:

Ժամը 17-ին Մայր տաճարում հանդիսությամբ կատարվում է «Ունալուա»-ի ավանդական կարգը, ապա ժամը 20-ին՝ «Հըս-

կում»-ի արարողությունը՝ նախագահությամբ
տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

• •

Ապրիլի 20-ին, ուրբաթ.—Առաջ ուրբաթ.
Առավոտյան ժամը 10-ին Մայր տաճա-
րում կատարվում է «Յիշատակ չարչարա-
նաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի», իսկ երեկոյան ժամը 17-ին՝
«Նախատօնակ և թափօր թաղմանն»՝ լու-
սարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի
հանդիսադրությամբ:

• •

Ապրիլի 21-ին, շաբաթ.—Առաջ շաբաթ.
Ճրագալոյց Ջատկի.

Մայր տաճարում ժամը 17-ին «Ճրագա-
լոյց»-ի ս. պատարագ է մատուցում տ. Ար-
սեն ծ. վրդ. Բերքերյանը և քարոզում ս. Հա-
րության խորհրդի հոգևոր ու քարոյական
վերանորոգող ճշմանկության մասին:

Ս. պատարագից առաջ Դանիելի գիրքը
ընթերցում են հոգևոր ճեմարանի սաները:

• •

Ապրիլի 23-ին, երկուշաբթի.—Յիշատակ
մեռելոց.

Մայր տաճարում ս. պատարագ է մատու-
ցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Ապրիլի 24-ին, երեքշաբթի.—Յիշատակ
բիրառոր նահատակացն մերոց, որք կատա-
րեցան յընթացս համաշխարհային առաջին
պատերազմի.

Մայր տաճարում, ս. Նահատակ խորանի
առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Գրի-
գորիս արդ. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից
առաջ քարոզում՝ «Եւ ծանիջիք եթէ ես եմ
Տէր, ի բանալ ինձ զգերեզմանս ձեր և հա-
նել զձեզ ի գերեզմանաց ձերոց, ժողովորդ
իմ» (Եզեկիել ԼԷ 18) բնաբանով՝ ոգեկոչե-
լով հիշատակը մեր բյուրավոր նահատակ-
ների:

Ս. պատարագից հետո Վեհափառ Հայ-
րապետի գլխավորությամբ հոգեհանգստյան
սլաշտոց է կատարվում մայրավանքի շրջա-
փակում կանգնեցված Ապրիլյան եղեռնի
հուշարձանի սուղն:

Այնուհետև Մայր Աթոռի միաբանությունն
ու հոգևոր ճեմարանի ուսանողությունն ուխ-
տի են մեկնում Երևան, Ծիծեռնակաբերդ,
և թարմ ծաղիկներ դնում մեր բյուրավոր
նահատակների հիշատակը հավերժացնող
Ապրիլյան եղեռնի հուշարձանին:


• •

Ապրիլի 29-ին, կիրակի.—Կրկնագատիկ.

Մայր տաճարում ս. պատարագ է մատու-
ցում տ. Մասիս արդ. Գալստյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհա-
փառ Հայրապետը:





ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵԿՈ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀՈՒՄ

Մարտի 28. ուրբաթ. Մեծ պահք: Մայր տաճարում երեկոյան ժամը 19-ին Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է գիշերային Հսկում-ի հանդիսավոր ու տպավորիչ արարողությունը՝ հավատացյալների քաղմության մասնակցությամբ:

Խորհրդավոր, մթաւքող լուծւոյան մեջ, փակ խորանի դիմաց, ատյանում, խաչելոյթյան պատկերի առաջ, հոգևոր ճեմարանի սաների աղոթածալն կատարուեմով հնչում են ս. Ներսես Ծնորհալու և ս. Գրիգոր Նարեկացու Հսկման երգերն ու աղոթքները՝ ներկաների հավատալոր հոգիները լցնելով և վերացնելով քարնպաշտ երկյուղածությամբ:

Արարողութեան ավարտին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով Մայր տաճարից առաջնորդվում է հոգևոր ճեմարանի հանդիսութեան սրահ՝ նախագահելու Մեծ պահքի առիթով կազմակերպված և ս. Գրիգոր Նարեկացու հիշատակին նվիրված գրական-երաժշտական երեկոյին:

Երեկոյին ներկա են լինում Մայր Աթոռի միաբանները, հոգևոր ճեմարանի դասախոսներն ու ուսանողները և քաղմաթիւ հրավիրյալներ ու հյուրեր:

Երեկոյի քացման խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննէս քհն. Մարությանը.

«Հոգևոր ճեմարանի տեսչութեան համար ուրախութիւն է նվիրական ար հարկի տակ մի անգամ ևս հավաքվել՝ ըմբռնելու, վալելու համար հայ ժողովրդի մեծ աղոթասացի և հանճարեղ քանաստեղծի՝ ս. Գրիգոր Նարեկացու «Մատենան Ողբերգութեան» պոեմից հատվածներ՝ նրա ստեղծագործութիւնների և եկեղեցական այլ երգերի երաժշտական ֆոնի վրա:

Գրիգոր Նարեկացին դադարել է միայն մեր ժողովրդի սեփականութիւնը լինելուց: Նա համաշխարհային արվեստի գանձարանում Դանթեի և Ծեքսպիրի կողքին ունի իր արժանի տեղը:

Նրա պոեմը ոչ միայն գրական, այլև փիլիսոփայական, աստվածաբանական քացառիկ նշանակութիւն ունեցող գործ է համաշխարհային մշակութի պատմութեան մեջ:

Ինչպէս հայ ժողովրդը քաղում դարեր տառապել է ու պայքարել մեղքի և չարիքի դեմ՝ հանուն արդարութեան և խաղաղութեան, այնպէս էլ Նարեկացին աղոթում և տառապում է մեղավոր մարդու հոգու խաղաղութեան և արդարութեան հաղթանակի համար:

Մարդկութիւնը այսօր էլ կարիք ունի հոգեկան խաղաղութեան, աղոթքի և կատարելութեան: Նարեկացին տառապած մարդկու-

թյան ուղիք լուսավորող հայ ջահակիրճ է»։
 Բացման խոսքից հետո ս. Գրիգոր Նարեկացու կյանքի և գործունեության մասին հակիրճ զեկուցումով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի Գլխարանի ուսանող Սամվել սրկ. Պետրոսյանը։

«Ս. Գրիգոր Նարեկացին հանդիսանում է հայ վերածնության սկզբնավորման շրջանի գրականության մեծագույն դեմքը։ Համաշխարհային գրականության մեջ նա հռչակվել է իր «Մատենան Ողբերգութեան» պոեմով։ Նարեկացին իր այս գործով միջնադարի քնարերգականներից ամենամեծն է։

Ս. Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունները լավ հասկանալու համար անհրաժեշտ է ընդհանուր պատկերացում ունենալ նրա ապրած ժամանակաշրջանի և այն գաղափարական ու հասարակական միջավայրի մասին, որի մեջ ապրել ու գործել է նա և որի արտահայտություններն են նրա ստեղծագործությունները։

Այդ շրջանում, երբ թագավորում էր աշխարհի և կյանքի ունայնության գաղափարը, մարդու բուն հայրենիքը համարվում էր հանդերձյալ կյանքը։ Իսկ դրան հասնելու համար արգելք էր լինում մարմինը։ Ուրեմն պետք է մահացնել մարմինը՝ տանջանքների ենթարկելով իրեն։ Եվ մարդ որքան ավելի ապաշխարներ, տանջեր իրեն քաղցով ու ծարավով, այնքան ավելի ձեռք կբերեր հոգու տիրապետություն մարմնի վրա։

Հոգու այս կոնիվ մարմնի հետ իր գործնական արտահայտությունը գտավ ամենից առաջ վանական և ճգնողական կյանքի մեջ։

Եվ ահա այս դարաշրջանի ծնունդն է Նարեկացին իր սրբակյաց վարքով և իր անմահ գրական վաստակով։

Ս. Գրիգոր Նարեկացին ծնվել է 951 թ.։ Նրա հայրը եղել է նշանավոր խոսքով Աճախացի եպիսկոպոսը, որը հայտնի է հատկապես իր «Մեկնութիւն ժամակարգութեան» և «Մեկնութիւն պատարագի» աշխատություններով։

Մանուկ հասակից կորցնում է մորը և տարվում ս. Սանդուխտի վանքը, որը հիմնադրել էր իր մորեղբայր Անանիա Նարեկացին և որը հետագայում Նարեկացու անունով ստացել է Նարեկ անունը՝ ի հիշատակ Գրիգորի ճնդապալար Նար գյուղի։ Գրիգորը կրթվում և սնվում է Անանիա Նարեկացու շնչի տակ, որը եղել է ժամանակի նշանավոր վարդապետներից մեկը և կոչվել «մեծ փիլիսոփա», երեսելի վարդապետ, այդ անունների և գիտնական»։

Այստեղ Գրիգորը ձեռք է բերում բազմակողմանի գիտելիքներ և կրոնական լուրջ պատրաստություն։

Գրիգոր Նարեկացին չունի կենսագրու-

կան հարուստ տվյալներ։ Պատճառը գուցե այն է, որ նա իր ժամանակը գերազանցապես անցկացրել է վանքում, ուր միշտ կրթվում էին միևնույն երևույթները՝ աղոթել, կարդալ, գրել, դաս տալ, խրատել և ապա դարձյալ աղոթել ի խորոց սրտի։

Նա միայն մի աշխարհ է ճանաչում՝ իր ներքինը, իր սիրտն ու միտքը, իր հոգին ու հայեցողական կյանքը...

Նարեկացին մեծ հռչակ է վայելել իր ժամանակակիցներից այն աստիճան, որ նրան սրբացրել են իր կենդանության օրոք իսկ։ Ժողովուրդը բազմաթիվ հրաշալի պատմություններ է հյուսել նրա մասին։

Մեկ կողմ թողնելով այդ պատմությունների ճշմարտացիության հարցը, այդ գրույցներում ապացուցվում են երկու բան։ Նախ այն, որ թանաստեղծը իր կենդանության օրոք իսկ ժողովրդի մեջ հռչակված և սիրված է եղել իրեն հրաշագործ, սուրբ մի անձնավորություն։ Այնուհետև այն, որ նա ունեցել է նաև հակառակորդներ ու թշնամիներ, որոնք շատ հավանաբար իր ժամանակաշրջանի ծույլ ու մարմնասեր հոգևորականներն են եղել։ Նրանք հալածել են Նարեկացուն, նրան կոչել «ծայր» մականունով և մեղադրել թոնդրական աղանդից հարելու մեջ։

Գրիգոր Նարեկացին մահացել է 1003 թ. և թաղվել նույն վանքում, ս. Սանդուխտ կույսի գերեզմանի մոտ։

Հայաստանյայց եկեղեցին ամեն տարի տոնում է ս. Գրիգոր Նարեկացու հիշատակը մեր մյուս թարգմանիչ վարդապետների հետ միասին։

Հարուստ և բազմաժանր է Նարեկացու թողած գրական ժառանգությունը։ Նրա ստեղծագործության երախայրիքը «Երգ երգոց»-ի մեկնությունն է՝ գրված 26 տարեկան հասակում, Գուրգեն Արծրունի Աճախացյաց թագավորի խնդրանքով, 977 թ.։ Այս մեկնությամբ Նարեկացու հիմնական նպատակն է եղել՝ հերքել «Երգ երգոց»-ին վերագրված աշխարհիկ բովանդակության մեղադրանքը և ցույց տալ, որ խորհրդապաշտոնեն հարստ եկեղեցին է, փեսան՝ Զրիստոսը, հետևաբար՝ ամուսնության անկողինը սուրբ է։

Այնուհետև Մովսես Ստեփանոս եպիսկոպոսի խնդրանքով 1000 թ. գրում է 3 ճառ՝ «Պատմութիւն Ապարանից խաչին», «Ներքող ս. Խաչին» և «Գովեստ ս. Աստուածածնի»։

Բացի սրանցից ունի նաև 2 այլ ներքողներ՝ նվիրված «Ս. Սուրբ լոց», և «Ս. Զակարայ Մծբնայ Հայրապետին», 3 զանգեր՝ «Ի Գալուստ սրբոյ Հոգւոյն», «Ի սուրբ եկեղեցի» և «Ի սուրբ Խաչն Աստուածընկալ», նաև թվով 20-ից ավելի տաղեր և մե-

ղեկներ և մի թուղթ ընդդեմ թոնդրակեցի-
ների:

Սակայն Նարեկացու ստեղծագործության
գլուխ-գործոցը «Մատենան Ողբերգութեան»
հոյակապ գործն է, գրական-կրոնական
աբանչելի մի կտորոց, որը Աստծուց հայ ժո-
ղովրդին տրված երկրորդ Աստվածաշունչն
է:

«Մատենան Ողբերգութեան» պոեմը սըր-
տաբուխ աղոթքների մի շտեմարան է: Իսկ
ի՞նչ է հասկացել Նարեկացին աղոթք ասե-
լով: Այս հարցի պատասխանը նրա մոտ հա-
մախ գործածվող հետևյալ արտահայտու-
թյունն է՝ «Ի խորոց սրտի խօսք ընդ Աս-
տուծոյ», իսկ ավելի պարզ բառերով ասած՝
աղոթքը Աստուծոյ հետ մտերմիկ, սրտաբա-
ց ու սրտաբուխ խոսակցությունն է:

Աղոթքի ժամանակ ոչ միայն հավատա-
յալն է Աստուծոյ հետ խոսում, այլ նաև
Աստված իբրև հայր՝ հավատացյալի հետ:
Եվ այսպիսով աղոթքի միջոցով երկու հոգի-
ներ շփվում են միմյանց հետ, անվերապա-
հորեն և անկաշկանդ: Հետևաբար քրիստոն-
յա հավատացյալի համար իր կյանքի ամե-
նաեղբայրական վարկյանները նրանք են, որոնց
ընթացքում նա այս ձևով աղոթում է Աստ-
ծուն ինքնաբուխ և համարձակ՝ թափելով իր
սրտի բոլոր ցավերը, բոլոր բաղձանքները
Նրա առջև, և փոխադարձաբար Նրանից
ստանում ներշնչում, հոգևոր ուժ, սրտի գո-
հունակություն:

«Աղոթքի մեջ ավելի լավ է ունենալ մի
սիրտ առանց խոսքերի, քան թե խոսքեր՝ ա-
ռանց սրտի», — ասել է իրավամբ անգլիացի
հայտնի մտածող Ջան Բոնյանը: Անգամ մեկ
նախադասությունից բաղկացած աղոթքը
շատախոսություն է, եթե անկեղծ չէ:

Գրիգոր Նարեկացու կյանքը սկզբից մի-
շեղ վերջ եղել է աղոթքի մի կյանք: Եվ ա-
ղոթքի մեջ է նա փնտրել իր ներքին գոհա-
ցումն ու կյանքի բոլոր հաջողությունները:

Որովհետև աղոթքը երկնային դոմենի
բանալին է: Եվ այս մոգական բանալիով
Նարեկացին բացել է իր առջև երկնքի դռնե-
րը:

Եվ ահա այս աղոթող հոգու մրմունջների,
նրա ալեկոծ ներաշխարհի անդհդային ո-
րոտների արձագանքն է հանդիսանում
«Մատենան Ողբերգութեան» պոեմը, որը ժո-
ղովրդական լայն զանգվածներին ծանոթ է
ավելի «Նարեկ» անունով:

«Ողբերգութեան» մեջ աղոթքները հիմնա-
կանում գրված են հետևյալ թեմաներով՝ փա-
ռաբանությունն առ Աստված, հոգևոր խոր-
հորդանություններ, հավատքի դավանանք,
մեղքի իրականության արտահայտություն,
խոստովանություն, զղջում, սպառախանք

փրկության համար, Աստծուն միանալու և
նրա հետ էախառնվելու սրտագին բաղ-
ձանք:

Գրվածքի մեջ տիրական գաղափարը հո-
գու փրկությունն ձեռք բերելու համար մեղքի
դեմ մղված շարունակական պայքարն է:

«Ողբերգութեան» մեջ կան երեք մեծ իրա-
կանություններ՝ ԱՍՏՎԱԾ, ՄԱՐԴ և ՄԵՂԷ:

Աստված ստեղծել է աշխարհը պարզ,
մաքուր վիճակում: Սակայն երևան է եկել
մեղքը: Մարդը հետևել է նրան և իր այդ
վարմունքով ապականել աշխարհը:

«Ողբերգութեան» մեջ մարդը համեմա-
տում է իրեն Աստուծոյ հետ, զգում նրա մե-
ծությունն ու անհուն սրբությունը, ակնածում
նրա առջև, ամաչում և իրեն ոչնչություն
համարում: Բայց նա երբեք չի հուսահատ-
վում, այլ հավատալով, որ Աստված բարի է
և անսահման սիրտ տեր, հուսադրում է ինքն
իրեն, որ ձեռք կբերի իր փրկությունը:

Նարեկացին այս փրկությունը պատկերել
է հետևյալ կերպ.

«Ծնչոյն ողջունի կապեալ ընդ շնորհիդ՝
Ի Քեզ միանալ անբաժանելի» (Բան Ի՛ր):

Այսինքն՝ Մարդը Աստուծոյ մեջ և Աստված
մարդու մեջ: Եվ այս փրկությունը լինում է
միայն Աստուծոյ շնորհիվ, փրկություն, որ
նա բաշխում է մարդկանց, բայց ոչ բոլորին:
Մարդն ինքն էլ պետք է աշխատի այդ շնոր-
հին արժանանալ, իսկ դրա համար նա
պետք է ունենա հավատ, հույս և սեր: Նույն
պետք է այդ ամենով հաղթի մարմնին,
պետք է ազատվի նրա կրքերից, մաքրվի ա-
մեն մի աշխարհիկ ներառյալից: Բայց հնարա-
վոր է արդյոք ուրանալ մարմինն ու աշ-
խարհը: Այս անհնարինությունն ահա Նա-
րեկացու համար դառնում է ներքին հուզ-
մունքների աղբյուր, ֆիզիկապես և հոգեպես
նրան տառապեցնում է: Բայց դա միաժա-
մանակ դառնում է իսկական քնարերգու-
թյան աղբյուր, աղբյուր մի այնպիսի բանաս-
տեղծության, որով ապաշխարողը պատկե-
րանում է մեզ իր ներքին ողջ ձգտումներով,
իր գալարումներով ու սարսուռներով:

Եթե ապաշխարողը չի կարողանում հեշ-
տությամբ հասնել իր նպատակին, դրա
պատճառն այն է, որ մարդը մարմնից կապ-
ված լինելով հանդերձ, միաժամանակ խա-
ղալիք է երկու ներհակ ուժերի միջև՝ Աստու-
ծո և սատանայի. Աստված ձգտում է նրան
բարձրացնել, իսկ սատանան՝ չարը, նրան
հետ է քաշում: Մարմնի վրա իշխում է սա-
տանան, որ ամեն տեսակ հրապույրներ
ստեղծելով՝ մարդուս մեղքի, փորձության
մեջ է ձգում շարունակ:

Իսկ մեղքը, ըստ Նարեկացու, այն ամենն
է, ինչ որ աշխարհային է:

Նա ճշգրտում է մեղքի բեռան սուս, ուստի

բուռն սաստկությամբ Եկարագրում է ավելի մեղքի զգացումը, մեղավոր մարդուն, քան մեղքը: Նա տառապում է մեղքի հետևանքներիով: Իր միստիկական ձգտման մեջ նա մի թույն անգամ հոգու անդորոտություն չունի, որովհետև միշտ տեսնում, գտնում է, որ սատանան՝ մեղքի ստեղծողը, իր աներևույթ լեզուններով կանգնած է իր առջև:

Ու ապաշխարողը միշտ դիմում է Աստծուն:

Բայց զարհուրելից այն է, որ բարերար ու ողորմած Աստված բանաստեղծի բոլոր աղերսալիցների ու հարցումների դիմաց կարծես մի անտարբեր ու խոր լռություն է պահում և երբեք չի հայտնում, թե նա այդ բոլոր աղերսալիցներից հետո պիտի փրկվի, թե ոչ:

Եվ այսպես առաջ է գալիս մեծ Ողբերգությունը:

«Նարեկը» ինքնատիպ է իր գաղափարներով և ցույց է տալիս տիպար վանականի շփումը Աստուծո հետ վերացման պահերի մեջ: Այնտեղ ամեն ինչ սրտաբուխ է և հարազատ: «Նարեկը» մի աղոթագիրք է, որ Աստուծո առջև է բացում հավատացյալի սրտի իղձերն ու հոգու թրթռումը: Այն իրավամբ համեմատվում է Օգոստինոսի «Խոստովանությունը» և Թովմա Քեմքացու «Նմանությունը Յիսուսի» գրքերի հետ:

Եթե «Մատենան Ողբերգութեան»-ի մեջ պատկերված է հոգու և մարմնի անհուսալի և ուղերգական պայքարը, ապա տաղերի մեջ տիրում է թեթևություն, զվարթություն:

Նարեկացին տեսնում է բնությունը, զմայլվում է, հրճվում է հոգին, ու ծնվում են բնության և սիրո բանաստեղծությունները:

Սակայն Նարեկացու սերը մի որևէ գյուղական էակի հետ առնչություն չունի: Նրա սերը անցյուրթական է, հոգեկան:

Նարեկացու տաղերը հիմնականում բաժանվում են երկու խմբի.

ա) կրոնական թեմայով գրված տաղեր.

բ) տաղեր, որոնց մեջ կրոնական բովանդակությունը արտահայտված է այլաբանությամբ, իսկ բուն բովանդակությունը, այս կամ այն չափով, ունի կյանքի ընդգրկում:

Գրական-գեղարվեստական տեսակետից առանձնապես աչքի են ընկնում երկրորդ խմբի տաղերը:

Ինչպես երևում է տաղերի վերնագրերից («Տաղ Ծննդյան», «Տաղ Հայտնության», «Տաղ Հարության», «Տաղ Վարդավառի», «Մեղեդի Աստվածածնի» և այլն), յուրաքանչյուր տաղ նվիրված է եկեղեցական համապատասխան տոների և հավանաբար իրանք գրվել են նույն տոների առիթով և ունեն օրհնաբանական ճշմանություն:

Տաղերի արմելը կարգադրվում է նրանում, որ

Նարեկացին այդ տոները պատկերել է ոչ թե տոնականի պես, ինչպես արվում էր իրենցից առաջ, այլ այլաբանորեն, կենդանի բնությունից վերցված, շոշափելի պատկերներով:

Այսպիսին է, օրինակ, Ծննդյան տաղը, որը մի ներքող է Աստվածածնին ուղղված, ամբողջովին բանաստեղծական ներշնչանքով գրվածք, ուր վերացական Աստվածածինը մարմնավորվում է, պատկերվում ինչպես կին՝ որ բոլոր գեղեցկություններով:

Մինչև Նարեկացին բնությունը մոտք չի գործել հոգևոր բանաստեղծության մեջ: Նարեկացին է, որ առաջին անգամ և այնքան վարպետորեն կերտում է բնության շոշափելի պատկերներ: Նարեկացին սիրել է բնությունը, սիրել նրա ամեն մի մասնիկը, սիրել ջրերը, լեռները, ծառերը, ծաղիկները, մարդկանց: Եվ այս սիրով է, որ քերթել է իր տաղերը:

Նարեկացին քրիստոնյա Հայաստանի մեծագույն քերթողն է:

Համար է նա, բավատացել է գործով անմահանալու ճշմարտությանը և գրել.

«...Ու թեպետ որպես մի մահկանացու
պիտի վախճանվես,
Բայց այս մասյանի հարակայությամբ
կմնամ անմահ»:

Վերջացնենք մեր խոսքը Հովհաննես Թումանյանի հետևյալ բառերով.

«...Մի կոթող կա, որ թերևս մի օր հայությունը կբարձրացնի Վանա ծովի ափերին, Նարեկա ժայռերի վրա, որ նա էլ երկնքին պատմի, «ի խորոց սրտի» Աստուծո հետ խոսի ու դեպի վեր ուղղի «Ձայն հառաչանայ հեծության սրտի ողորց աղաղակի...»:

Եվ կատարյալ կլինի: Թող լսեն և՛ երկինքը, և՛ երկիրը: Եվ պետք է լսեն, որովհետև այստեղ արդեն հայի լեզուն չի, որ խոսում է, բերանը չի, որ պատմում է, կրակոտ սիրտն է, որ այրվում է երկիրը բռնած, տանջված հոգին է, որ մոռնում է մինչև երկինքը:

Ապա սկսվում է երեկոյի գեղարվեստական բաժինը:

Բեմ է բարձրացնում վաստակավոր արտիստուհի և անվանի ասմունքող Սիրվարդ Մեսրոպյանը:

Հանգչում են դահլիճի լույսերը:

Բեմում բոցկալում են երեք մուներ՝ դրված քանդակազարդ գրակալի վրա: Իսկ գրակալի առջև կանգնած է սևազգեստ վանականը՝ արվեստագիտուհին:

Բեմի խորքից, հոգևոր ճեմարանի սաների կատարմամբ, մեղմությամբ հնչում է «Ընկալ թաղորոթեամք Տէր Աստուծո հպօր» (Բան ԺԲ) մեղեդին:

Եվ մոմերի աղոտ լուսավորությանն ներքո
շարժվում են վանականի շրթունքները.

«Ընդունիր հյուսվածքն այս աղիողորմ
հեծեծանքներիս

Եվ այս բանական նվերն հոտոտիր
Որպես անարյուն զոհաբերություն...»:

Եվ աղոթում է վանականը սրտաբուխ ու
սրտաթաց...

Դահլիճում ծփում են Նարեկացու աղոթք-
ները ճաշակով ընտրված հաջորդականու-
թյամբ, որոնք կազմում են հիմնական երեք
մեծ խմբեր. աղոթքներ՝ նվիրված Հայր Աստ-
ծուն, աղոթքներ՝ նվիրված Հիսուս Քրիստո-
սին, և աղոթքներ՝ նվիրված ս. Կույս Մա-
րիամ Աստվածածնին:

Մերթ ընդ մերթ, գեղարվեստական լա-
վազում ընտրությամբ, հնչում են կրոնական
զանազան մեղեդիներ, ստեղծելով հոգեպա-
րար մթնոլորտ:

Ծնորհալի արտիստուհի Սիրվարդ Մես-
րոպյանը մոտ մեկ ու կես ժամվա ընթաց-
քում մեծ վարպետությամբ, ճշգրիտ ու յու-
րահատուկ մեկնաբանությամբ ներկայացրին
է հաղորդում Նարեկացու «Մատենան Ող-
բերգութեան» հոյակապ գործը իր ոճական
առանձնահատկությամբ, հնչելությամբ և
նարեկյան թափով:

Վերջում արտիստուհի Սիրվարդ Մեսրոպ-
յանին ուղղված օրհնության և գնահատան-
քի ջերմ խոսք է ասում Վեհափառ Հայրա-
պետը՝ հատկապես շեշտելով, որ ս. Գրիգոր
Նարեկացին ոչ միայն կենդանի է եղել իր
ժամանակին, այլ կենդանի է նաև այսօր և
կենդանի կմնա հավիտյան: Եվ այս գործում
շնորհակալական աշխատանք է կատարում
տիկ. Սիրվարդ Մեսրոպյանը, որը արժանի
է ջերմ գնահատանքի և Մեր օրհնությամբ:

ՍԱՄՎԵԼ ՍԱՐԿԱՎԱԳ ՊԵՏՐՈՍՅԱՆ





Ա Կ Ն Ա Ր Կ

Ս. ԷԶՄԻԱԾԵՆԻՆ ՀԱՏՈՒԿ ՄԻ ԲԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երանաշնորհ Գևորգ Դ Հայոց Հայրապետի անունը ոսկե տառերով է արձանագրված ոչ միայն հայ դպրոցի պատմության մեջ իր հիմնած Գևորգյան ճեմարանով, այլ նաև հայ եկեղեցական երաժշտության պատմությանը մատուցած իր ծառայությամբ։ Արդարև, մեծ է նրա երախտիքը ս. Էջմիածնում մեր հոգևոր երգերի և շարականների եղանակները հայկական ձայնաճիշերով գրառման գործը կազմակերպելու ասպարեզում։

Գևորգ Դ կաթողիկոսի ինչպես երաժշտական, այնպես էլ պատմական արժեք ներկայացնող այդ ձեռնարկի իրականացման շնորհիվ այսօր մենք ունենք ոչ միայն հազարից ավելի ձայնագրված հոգևոր ճգրիտ եղանակներ, այլ նաև այդ ձայնագրությունների միջոցով ամբողջական պատկերացում ենք կազմում այն մասին, թե ինչ վիճակում են եղել այդ եղանակները 19-րդ դարի երկրորդ կեսերին։

Երաժշտագետ Հայրապետի ազգօգուտ այդ ձեռնարկը, անկասկած, փրկեց մեր հոգեվոր երգարվեստի հարուստ ժառանգությունը խաթարումից և կորստից։

Իրավամբ, 1875 թ. տպագրված ձայնագրյալ շարակնոցի սուաջաբանում տրված բնորոշումը իբրև «յոգնատուժան» ձեռնար-

կի, երախտագիտական զգացումներով է լցնում մեզ՝ նոր սերնդիս, դեպի ս. Էջմիածնի միաբանությունը և մանավանդ դեպի ժառանգակի երաժշտագետ Նիկողայոս Ս. Թաշճյանը, որը ծանր, պատասխանատու, բայց պատվաբեր մի աշխատանք զխավորեց Մայր Աթոռում Գևորգ Դ երաժիշտ կաթողիկոսի անմիջական հսկողության ներքո, զլուխ բերելով այն ծավալուն ձայնագրյալ բազմահազար գործերը, որոնցից են՝

ա. Ձայնագրեալ շարական հոգեւոր երգոց սուրբ եւ ուղղափառ առաքելական եկեղեցւոյս Հայաստանեայց, Վաղարշապատ, 1875.

բ. Երգք ձայնագրեալք ի ժառագորոց, Վաղարշապատ, 1877.

գ. Ձայնագրեալ երգք ս. պատարագի, Վաղարշապատ, 1878.

դ. Ձայնագրեալ քաղուածք օրհնութեանց, Վաղարշապատ, 1882:

Մայր Աթոռի տպարանից լույս են տեսել նաև մեծ ու փոքր ձայնագրված այլ մատյաններ ևս, որոնք օգտագործում ենք մեր եկեղեցական պաշտամունքները կատարելիս։

Ինչպես Էջմիածնում Ն. Թաշճյանի գործը Արևելյան Հայաստանի հոգևոր եղանակների փրկության և գրառման գործում նա-

իւսիւնամական դեր կատարեց, այնպէս էլ Պոլսում՝ պոլսական եղանակների համար Եղիա Տնտեսյանի, Կալկաթայում՝ Պարսկաւանի և Նոր Զուղայի եղանակների համար Էմի Աբգարի, և վերջերս Վենետիկում՝ հանգուցյալ Ռ. Ղևոնդ Տայանի ձայնագրությունները: Այս աշխատությունները գործնական ճշանակությունից քացի ունեն մի այլ կարևոր արժեք ևս: Դա այն է, որ սույն կառելովոր գրառումները ցույց են տալիս այդ եղանակների կրած ազդեցությունը տվյալ միջավայրից: Թեև դժվար է ասել, թե այս բոլոր ձայնագրությունների մեջ որոնք են ավելի հարազատը մեր ավանդական եղանակներին, եղանակներ, որոնք արձանագրված են մեր քաղաքաբարոյութ ձեռագիր «մանրութուններ»-ների մեջ՝ գրված մեր քաղութ վանքերում: Բայց մի փաստ պարզ է, որ Կոմիտաս վարդապետը իր հոգևոր եղանակները մշակելիս դիմել է Ն. Թաշճյանի ձայնագրություններին: Դա էլ ինքնին վստահություն է ներշնչում մեզ ասելու, որ մեր ավանդական եղանակներին ամենաստույն Ն. Թաշճյանի՝ Էջմիածնում գրի առած ձայնագրություններն են:

Այնուամենայնիվ հարցը մնում է վիճելի:

Այս ամստույգ իրավիճակի մեջ մեզ համար առաւել կարևոր ճշանակություն ունեն վերոհիշյալ ձայնագրություններից առանձին գրի առնված «Էջմիածնի եղանակ» կոչված այն երգերը, որոնք գտնվում են Խրիմյանի կաթողիկոսության շրջանին Էջմիածնում հայկական ձայնահիշերով լույս տեսած զբրքերից մեկում, որը կոչվում է «Երեկոյեան տոնոլիք» մեծի պահոց եւ այլ եկեղեցական

հոգևոր երգք», ի Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռույ Սրբոյ Էջմիածնի, 1899»:

Դրանք հետևյալներն են՝

ա. Համբարձի կիրակնամտից, Սուրբ եւ Տէր (էջ 19).

բ. Ի Քէն հայցեմք (էջ 23).

գ. Արի Տէր (երկու տարբերակներ) (էջ 31).

դ. Մանապարհ եւ ճշմարտութիւն (էջ 32):

Էջմիածնի վանքին հատուկ այս եղանակների վերածումը հայկականից եվրոպական ձայնահիշերի, հնարավորություն է տալիս վերակենդանացնելու այդ եղանակները ոչ միայն Մայր Աթոռում, այլև մեր բոլոր եկեղեցիներում, որովհետև մանավանդ այսօր անհրաժեշտ է նկատվում վերանորոգել մեր եկեղեցու ժամերգությունների նկարագիրը ոչ թե ներմուծելով նրա մեջ մեզ համար ոչ հարազատ եղանակներ, այլ անադարտ պահպանելով հայկական նկարագիր ունեցող երգերը, ինչպիսիք են մեր ներկայացրած մտուշները:

Հավատքով ենք գրում այս տողերը, որովհետև համոզված ենք, որ որքան վստահությամբ դիմենք մեր ժողովրդի հնագույն ստեղծագործությանը և հայտնաբերենք նրա հարազատ ժառանգությունը, այնքան ավելի պիտի գտնենք այն ազգային մնայուն արժեքները, որոնք երբեք չեն կարող հնանալ, ինչպես չեն հնանում Բաիփ, Բելթոլվենի և Կոմիտասի թողած ստեղծագործական ժառանգությունը:

ԱՐՄԵՆ Ծ. ՎՐԴ. ԲԵՐԲԵՐՅԱՆ

ՀԱՄԱՐՁԻ ԿԻՐԱԿԱՐՏԻՑ ՎԶՄԱՅՆԻ ԷՂԱՆԱԿ

Չափաւոր ԱԿ.

Համ - բա ր - ծի գաջ ս իմ ի լե - ռի
 Ես ուս - տի ե - կես - ցէ իճճ օգ - ցու թիւ ց
 Սուրբ ես Տէ - ր գօ - րու - թեանց որ բնա - կեալդ ես
 ի յե ր կիցս և բա - րե բա - ճի ս
 ի սրբ - բո ց թո ց

Վերջաւորութիւն

Ի ՏՕՆԻ ԱՌԱՔԻՄՈՅ ՎԶՄԱՅՆԻ ԷՂԱՆԱԿ

Նշանք, չափաւոր ԱԶ, Հմբ.

Ի Բէճ հայ ցե մը ք բա - զում
 ո - ղորմ ի ծե - ողճ սըր - բոց
 բոց ա - ռա - քե - լոց խը - ցա - յեա
 Տէ ր ի յան ծի - ցը ս մե - ր

ԱՐԻ՛, ՏԷՐ (ԵԶՄԻԱԾՆԻ ԵՂԱՆԱԿ)

Մանր Ավ.

Ա - րի՛ ՏԷՐ օ գ ճեա
մեզ և փը ը կեա ը գ
մեզ վասն ա ճ ու ա ճ քո
Ա - րի՛ և մի մեր - ժե՛ք ըս մեզ
ի ս պա ո վասն
ա ճ ու ա ճ քո.

Զափառուր Ավ.

Ա ըի՛ ՏԷՐ օ գ ճեա
մեզ եւ փը ը կեա ը
գ մեզ վա - սըն ա ճ ու ա ճ քո.

Ա - րի և մի մե ր - ժեք ըզ - մեզ

ի ս պա ո

վա - սըն ա ր - ուա ց քո.

ՃԱՆԱԳԱՐՔ ԵՎ ՃԵՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ
(ԵԶՐԱԾՆԻ ԵՂԱՆԱԿ)

Մանր ՊԿ.

ճա - ճա - պա - րի ե և ճը

- 2 մա ր տու - քիւն

և կեա ճք քրի ս

տո ս ա - ռա 2 - ճո ր -

դեա հոգ - լո ց մե - րո

9 յերկրե եւա - ճե Լ

յե ր - կի - ճըս.

Մանր

Դուռը ց կե - նաց

մը - տի ց Հի սուս

Չսփառը

մո յծ և ըզ մե գ առ Հա յր քա և

Հո - գի եր - գե ւ մի շտ ը գ փա - ռուս





ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆՈՐ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

1973 թվականի մարտի 20—25 օրերին, ուսումնական տարեկանի հրապարակում և հաշվառման ժամանակ, Մոսկվայում տեղի ունեցավ ԽՊՀՀ-ի հերթական համագործակցության ընթացքում քննարկվեցին խաղաղության ասպարեզում այժմեականությունը և ներկայացնող մի շարք կարևոր հարցեր:

Սույն կազմակերպության նախորդ հիստորիայի էր ունեցել 1971 թվականին Բուկրովայում (ԳԴՀ):

Մարտի 20-ին, առավոտյան ժամը 9.30-ին, Մոսկվայի «Ռոսսիա» հյուրանոցի հանդիսությանը սրահում տեղի է ունենում ԽՊՀՀ-ի հերթական հիստորիայի «խաղաղության դարում քրիստոնեական եկեղեցիների խաղաղասիրական պարտականությունները և Եվրոպայի լարվածությունը» նշանաբանով: Սույն հիստորիայի ներկայացում է ԽՊՀՀ-ի հաշվառման տ. Նիկողոսի միտրոպոլիտը:

Նախորդների հետ համեմատած թվով ամենաբազմամարդն էր այս ժողովը, որին իրենց ներկայացրեցին Էին ուղարկել ոչ միայն Ռուսաստանի, Հայաստանի, Վրաստանի և մերձբալթյան երկրների, այլև Շվեյցարիայի, Չեխոսլովակիայի, Եթովպիայի, Հնդկաստանի, Հունգարիայի, Լեհաստանի, Չիլիի, Արևելյան և Արևմտյան Գերմանիաների, Կուբայի, Ֆինլանդիայի և այլ երկրների եկեղեցիները:


ԽՊՀՀ-ի աշխատանքային կոմիտեն սույն թվականի մայիսի 25—28 օրերին Զագորս-

կում շարունակելու է իր աշխատանքները և գումարելու է հիստորիայի ընթացքում քննարկվելու են հետևյալ՝ Եվրոպայի և աշխարհի անվտանգության, Մերձավոր Արևելքի, Ռուսիայի, ապարտեյդի, կրոնական և ոչ կրոնական, քրիստոնեական և ոչ քրիստոնեական, խաղաղության պայքարի շարժման, ինչպես նաև տնտեսական, հրատարակչական և էկոմենիկ շարժման հետ կապված մի շարք հարցեր:

Աշխատանքային կոմիտեի յոթ հիստորիկ էլ, որոնք սկսվում և փակվում էին աղոթքով, փոխմիփոխ հախազահում էին ԽՊՀՀ-ի յոթ փոխ-հախազահները՝ ընդհանուր հախազահի գլխավորությամբ:

Ա. հիստ. ուսմին օրթոդոքս եկեղեցու պատգամավոր տ. Նիկոլայ Կորնեանու միտրոպոլիտի աղոթքից հետո հախազահող սրբազան միտրոպոլիտը ժողովը հաշտարում է բացված: Տ. Նիկողոսի միտրոպոլիտը խոսում է Եվրոպայում խաղաղության շարժման զարգացման մի նոր ժամանակաշրջանի մասին, որն իր առանձին պարտավորություններն է դնում ինչպես բոլորի, այնպես էլ եկեղեցիների առջև: Առհասարակ ինչ վերաբերում է մեր մոլորակի քաղաքական կլիմային,—ասում է նա,—ապա այն այնքան էլ անմխիթար չէ, շնորհիվ խաղաղասեր բոլոր ուժերի միատեղ ջանքերի:

Բ. հիստին վերոհիշյալ գլխավոր թեմայի շուրջ ճառով հանդես է գալիս ինչպես ժո-



Մի պահ ժողովի նստաշրջանից

դովին զեկուցման համար հրավիրված եվրոպական անվտանգության սովետական կոմիտեի փոխ-նախագահ Ն. Ե. Պոլյանովը, այնպես էլ ԽՊՀՀ-ի փոխ-նախագահ և ԳՖՀ-ի ավետարանական եկեղեցու ներկայացուցիչ պատուիր-դոկտոր Հերբերտ Մոխալսկին:

Առաջին ելույթ ունեցող հռետորը խոսում է վերջին տարիներին մի շարք պետությունների միջև կնքված պայմանագրերի մասին, որոնք նպաստել են խաղաղության ընդհանուր գործին: Իսկ դուկտ. Մոխալսկին կանգ է առնում ԽՊՀՀ-ի և այլ խաղաղասեր ուժերի միջև համագործակցության և մանավանդ խաղաղության պաշտպանության համաշխարհային խորհրդի հետ ԽՊՀՀ-ի դերի կարևորության հարցերի վրա՝ ի խնդիր եվրոպայի անվտանգության և համագործակցության:

Այնուհետև Աշխատանքային կոմիտեն անցնում է սույն ելույթների ու ճառերի քննարկմանը և համապատասխան որոշումներ կայացնում:

Սույն ճիստի մասնակիցները այնուհետև աղոթքով հարգում են Աշխատանքային կո-

միտեի գործունյա անդամ և ռուս պրավոսլավ եկեղեցու ավագներեց տ. Պավել Սոկոլովսկու հիշատակը, որը զոհվել էր օդային մի աղետի ժամանակ:

Նույն օրվա Ա և Բ ճիստերի ընթացքում ներկաներին ուղղված ողջույնի խոսքերով հանդես են գալիս մայն՝ Տուլայի և Բելի միտրոպոլիտ տ. Յուլյենային՝ ռուս ուղղափառ եկեղեցու և Ն. Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի և անձամբ իր անունից:

Ապա ելույթ է ունենում Ծիրակի թեմի առաջնորդական տեղապահ տ. Նարեկ վրդ. Ծաքարյանը՝ Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցու և Նորին Ա. Օծություն Տ. Տ. Վազգեն Առաջինի անունից ու ասում հետևյալը.

«Իբրև ներկայացուցիչ Հայաստանյայց առաքելական եկեղեցու, պատիվ ունեմ բերելու այստեղ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի ողջույնն ու մաղթանքը, որ աշխարհի խաղաղության է՛լ ավելի ամրապնդման նպիրված այս պատկանելի ժողովի աշխատանքները հաջողությամբ պսակվեն և հիմքերը դրվեն նոր ու ծավալուն գոր-

ծունելության՝ նվիրված խաղաղության փառքին և ժողովուրդների եղբայրության:

Ժողովուրդների բարեկամության և խաղաղ գոյակցության գաղափարը միշտ լսանք են եղել մեզ հայ եկեղեցու ու ժողովրդի համար: Հայ եկեղեցին դեռևս 1949 թվից սկսած ռուս պրավոսլավ եկեղեցու կողքին անջեղորեն և ակտիվորեն իր մասնակցությունն է բերել խաղաղության շարժմանը, և մեր կաթողիկոսը՝ Վազգեն Ա, անձամբ մասնակցել է շատ ժողովների և համագումարների՝ միշտ իր խոսքը բարձր հիմնքներով, ամբողջ մարդկությանը հուզող հարցերի վերաբերյալ:

Այսօր էլ մեր եկեղեցին սիրով է մասնակցում այս պատկառելի ժողովին և պատրաստ է իր բոլոր ուժերով մնալու և իր աշխատանքի բաժինը կատարելու ձեր կողքին, սիրեցյալ եղբայրներ մեր:

Մեզ՝ խաղաղության պաշտպաններին համար այս տարին եղավ կարևոր մի հաղթանակի տարի՝ Վիետնամում կրակի դադարեցումով: Այո, իմպերիալիստական ռազմավորումները պարտվեցին՝ շնորհիվ Վիետնամի ժողովրդի հերոսական դիմադրության, բայց մեզ շնորհիվ խաղաղության համաշխարհային շարժման ծավալված վայելուց գործունեության, որը կարողացավ արթնացնել խիղճը բոլոր ժողովուրդների, ներառյալ ամերիկյան ժողովրդի լայն զանգվածների:

Այսպես է, որ իմպերիալիստները ստիպվեցին խոնարհվել աշխարհի խաղաղասեր մարդկանց կամքի առջև: Սա եղավ հաղթանակը ազատության, հաղթանակը ժողովուրդների սրբազան իրավունքների, հաղթանակը մեզ ավետարանական պատգամի, որ մեզ կտանել է մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս:

Սակայն Վիետնամի զինադադարով չի վերջացել խաղաղասեր մարդկանց առաքելությունը: Դեռևս բազում վայրերում աշխարհի վրա շարունակվում են ագրեսիվ գործողություններ ժողովուրդների արդար իրավունքների դեմ: Պետք է արթուն պահել բարի կամքի տեր մարդկանց խիղճը և շարունակել պայքարը մինչև վերջնական և ամբողջական հաղթանակը խաղաղության և ժողովուրդների բարեկամության մեծ գաղափարների:

Մենք հպարտ ենք, որ մեր մեծ հայրենիքը՝ Սովետական Միությունը, իր մարդասեր քաղաքականությամբ, գլխավոր գրավական է և անխորտակելի ուժը այս գաղափարների պաշտպանության: Մեր հայրենիքի այս մարդասեր քաղաքականությունը մեզ մեր քրիստոնեական առաքելությունն է: Ահա թե ի՞նչ ու մենք՝ հոգևորականներս,

նկր-նկրի տված պետք է շարունակենք մեր աշխատանքը, մեր այս պայքարը՝ հանուն խաղաղ մի աշխարհի ստեղծման և հերջանկություն բոլոր ժողովուրդների:

Ժող Աստված օրհնի խաղաղության գործը, թող Աստված օրհնի աշխարհի բոլոր խաղաղարարներին:

Մարտի 21-ի Գ. Գիստին ճառով հանդես է գալիս ԽՊՀՀ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Կարոյի Տոտը, որը կոչ է անում բոլոր քրիստոնյաներին և ոչ քրիստոնյաներին՝ սատար հանդիսանալ խաղաղության սրբազան գործին ո՛չ միայն այն երկրներում, որտեղ խաղաղությունը դեռևս չի հաղթանակած, այլև այն վայրերում, ուր խաղաղություն է տիրում և հարկավոր է այն պահպանել և ամրապնդել:

Վերջում գլխավոր քարտուղարը ցանկություն է հայտնում, որ ԽՊՀՀ-ի աշխատանքները շարունակող կոմիտեի հաջորդ Գիստերը տեղի ունենան Զագորսկի մայրավանքում, իսկ սույն թվականի հոկտեմբերին էլ Մոսկվայում կայանալիք աշխարհի խաղաղասեր ուժերի ճակատի կոնգրեսին ԽՊՀՀ-ի կողմից ուղարկվի չորս հոգուց բաղկացած մի սպառամավորություն:

Հետագա Գիստերին ելույթներ են ունենում մեզ Սիերրա-Լեոնեի, Լեհաստանի, Ֆինլանդիայի և այլ եկեղեցիների ներկայացուցիչները՝ «ԽՊՀՀ-ի մասնակցությունը որոշակի մասով ժողովում և նրա աշխատանքները շարունակող կոմիտեում», «Վիետնամի, Լատվի և Կամբոջայի հետ համերաշխության քրիստոնեաների ժողովը», «Պակս Խրիստի Ինտերնացիոնալիս» և այլ թեմաներով:

Այսպիսով ԽՊՀՀ-ի Աշխատանքային կոմիտեն ունենում է 7 Գիստ, որոնց ընթացքում լսվում են ավելի քան 20 զեկուցում, ճառ և այլն, որոնք հանգամանորեն քննարկվելուց հետո փաստաթուղթ են դառնում շարժման մասին և ապա հանձնվում հրատարակության: Ե, Զ և Է Գիստերը վերաբերում էին կոմիտեի կազմակերպչական, տնտեսական բնույթի հարցերին, ինչպես մեզ ԽՊՀՀ-ի կազմում Ուգանդայի, Քենիայի, Ավստրալիայի, Հոլանդիայի եկեղեցիների անդամակցության և հոուսակական կաթոլիկ եկեղեցու հետ հարաբերություններ հաստատելու հարցերին:

Աշխատանքային կոմիտեն բուլղար եկեղեցու պատվիրակի առաջարկով խմբագրում է մեզ մի հեռագիր՝ Կիպրոսի հանրապետության արեգիդեմո Տ. Մակարիոս արքեպիսկոպոսին ուղղված, որի մեջ ԽՊՀՀ-ն իր անվերապահ պաշտպանությունն է հայտնում նրան՝ Միջերկրական ծովի ավազանում և համայն աշխարհում խաղաղության

պաշտպանության ու Կիպրոսի ժողովրդի օգտին իր քերած մեծ գործի համար:

Մարտի 22-ին, հինգշաբթի օրը, Աշխատանքային կոմիտեի ներկայացուցիչները Սովետական Միության ավետարանական մկրտչական համաժողովի հրավերով ներկա են լինում սիրո և էկումենիկ սեղանին՝ Մոսկվայի ցրանց կենտրոնում:

Մարտի 23-ին Մոսկվայի և Համայն Բուսաստանի Պատրիարք Տ. Պիմենը, Աշխատանքային կոմիտեի ժողովի ավարտից հետո, ժողովի մասնակիցների համար կազմակերպում է մեծ ընդունելություն, որին ներկա են լինում ոչ միայն ժողովի մասնակիցները, այլև շատ հյուրեր, մայրաքաղաքի կրոնական և հասարակական գործիչներ:

ԽՊՀՀ-ի Աշխատանքային կոմիտեի աշխատանքներն անցան գործարար մթնոլորտում «Նստցի ժողովուրդ իմ ի գեղեցկության և ի յարկս յուսոյ և ի հանգստեան մեծության» (Եսայի ԼԲ 18) քննադատով:

Միմիայն քրիստոնյաների ջանքերով չէ, որ կիրականացան խաղաղության նպատակները: Ահա թե ինչու քրիստոնյաները բարի կամքի տեր բոլոր մարդկանց հետ միանում են իրենց ընդհանուր պաշարում, ընդդեմ պատերազմի, սովի, շահագործման և ուսնիզմի, աշխարհի վրա ավելի կատարյալ խաղաղության, փոխհասկացողության, մարդկանց ու ժողովուրդների քարեկամության և հաշտության համար:

Հայ եկեղեցին ևս Մայր Աթոռ ու Հռոմի միաձնի գլխավորությամբ իր ծայցն է միացնում աշխարհի խաղաղասեր և հավատացյալ ժողովուրդների ծայցին, որպեսզի երկրի վրա լինի խաղաղություն, եղբայրություն:

«Խաղաղությամբ յայս և ի սոյն ննջեցուք և զարթոցուք, զի դու, Տէ՛ր, միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ» (Սաղմ. Դ 9):

ՆԱՐԵԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԸԱՔԱՐՅԱՆ





ՖԻԼԱՆՏԻՆԻ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋԵՈՐԴԱՐԱՆՈՒՄ

Ֆրանսիայի հայոց առաջնորդ և Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը մարտ 28 թվակիր իր պաշտոնական նամակով հաղորդում էր Վեհափառ Հայրապետին, թե սույն թվականի մարտի 18 և 14 օրերին Փարիզի հայոց առաջնորդարանում իր հրավերով գումարվել է Ֆրանսիայի և Արևմտյան Եվրոպայի հայոց եկեղեցիների ու եկեղեցական վարչությունների ներկայացուցիչների խորհրդակցական ժողով:

Տ. Սերովբե արքեպիսկոպոսն իր սույն գրությամբ կցել էր նաև Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակության դիվանի կողմից տրված ժողովի պաշտոնական հաղորդագրությունը, որից քաղում ենք հետևյալ տեղեկությունները:

Ֆրանսիայի և Արևմտյան Եվրոպայի Հայաստանյայց եկեղեցիների խորհրդակցական ժողովին մասնակցել են 15 եկեղեցականներ և եկեղեցական վարչությունների 19 աշխարհական ներկայացուցիչներ, այդ թվում՝

Փարիզից

Տ. Դյուտ ծ. վրդ. Նագաշյան՝ ընդհանուր փոխանորդ հայր. պատվիրակի, տ. Նորվան վրդ. Զաքարյան, Սեդրակ Քարյան՝ ատենապետ եկեղեցվո վարչության, մեթո Արմեն Բարսեղյան՝ փոխ-ատենապետ, Աղեքսանդր Ոհանյան, Պատրիկ Կենճյան, Կարպիս Զրբաշյան, Համալզասպ Մոմճյան:

Ալֆորվիլ

Տ. Զարեհ վրդ. Թորալյան, տ. Պարզև քրմ. Մերճանյան, Նազարեթ Պետիկյան՝ ատենապետ հոգաբարձության, Հարություն Մալճյան:

Անուվիլ լե Կոնես

Տ. Մեսրոպ քրմ. Ժամկոչյան, Արմենակ Անճյան՝ ատենապետ հոգաբարձության:

Շավիլ

Հակոբ Դավիթյան, Արամ Տետեյան:

Լիոն

Տ. Դավիթ ծ. վրդ. Սահակյան, տ. Գրիգորիս արդ. Բունիաթյան՝ օգնական հովիվի, Գաբրիել Պահատուրյան՝ ատենապետ:

Գեսին

Տ. Վահան վրդ. Թորալյան, Գեղամ Տալալյան՝ ատենապետ, Մեսրոպ Պալմադրյան՝ ատենադպիր:

Վալանս

Տ. Նարեկ քրմ. Վարդանյան, Մուշեղ Մեղանյան՝ ատենապետ, Մամբրե Սեմերճյան:

Մարսել

Տ. Հակոբ եպս. Վարդանյան՝ հայրապետական պատվիրակի փոխանորդ, տ. Վաչե վրդ. Իզմատիսյան, Հ. Ստեփանյան՝ անդամ Պրադոյի Մայր եկեղեցվո վարչության, Տելիզազարյան՝ ատենապետ Սենթ Անթուանի եկեղեցու:

Նիս

Տ. Տարոն վրդ. Մերենյան:

Մարսել—Լա Սիոթա

Թովմաս Համամճյան:

Ժնև

Տ. Նուրհան արքեպ Մանուկյան:

Ժողովը բացվել է մարտի 18-ին, երեքշաբթի օրը, ժամը 15.30-ին, Փարիզի հայոց առաջնորդարանում, տ. Սերովբե արքեպիսկոպոսի նախագահությամբ:

Այնուհետև տեղի է ունեցել ժողովի դիվանի ընտրությունը, որից հետո հայրապետական պատվիրակ սրբազանը հրավիրվել է կարդալու իր տեղեկագիրը՝ սեղմ գծերի մեջ ներկայացնելով անցնող քսան տարի-

ների ընթացքում Արևմտյան Եվրոպայի և ի մասնավորի Ֆրանսիայի Հայաստանյայց եկեղեցիների կրոնական, եկեղեցական, կրթական և վարչական գործունեության ընդհանուր պատկերը:

Տ. Սերովբե արքեպիսկոպոսն իր տեղեկագրի մեջ գոհունակությամբ շեշտել է, թե «այս վերջին շրջանին ավելի կազմակերպված, բարգավաճ ու կենսունակ վիճակ մը կենդանացան մեր եկեղեցիները: Կառուցված են վեց նոր եկեղեցիներ, երեքը Ֆրանսայի մեջ, Վալանս, Շալիլ և Լիոն. այս վերջինը իր ծավալով, հարակից սրահով, դասարաններով և այլ հարմարություններով, Լիոնի եկեղեցական և համայնքային կյանքին կեդրոնը եղած է գաղութին մեջ: Շինության ընթացքին մեջ է Իսի Լե Մուլի-Շոյի եկեղեցին: Վերջին այս շրջանին էր, որ կառուցվեցան՝ Միլանոյի մեջ ս. Քառասուն մանկանց եկեղեցին բարերարությամբ Տիարաբերության եղբայրներուն, Վիեննայի մեջ ս. Հովսիսիմե եկեղեցին բարերարությամբ տիկին Ռոզ Թրիքի՝ Հովսիսիմե Հալանյանի և Ժենի մեջ սուրբ Հակոբ եկեղեցին՝ բարերարությամբ պրն. Հակոբ Թովալյանի: Այս երեք եկեղեցիներն ալ իրենց ճարտարապետական կառուցվածքով, հայկական դասական ոճով և վայելույզ գեղեցկությամբ պատիվ կբերեն ոչ միայն պատկան համայնքներուն, այլ ամբողջ հայ ժողովուրդին»:

Արդարև, գոհունակությամբ պետք է արձանագրել, որ համերաշխ աշխատանքների շնորհիվ առ այսօր Արևմտյան Եվրոպայի մեջ գործում են 27 հայկական եկեղեցիներ և մատուռներ, ներառյալ նաև Անգլիան, ուր կան երեք հայկական եկեղեցիներ:

Ուրախալի է և միախառնական նշել, որ վերոհիշյալ եկեղեցիները, «հակառակ ամենուրեք զգացված կրոնավորներու պակասին», ապահովված են նաև «բավարար թիվով ներկայացուցիչներ և իրենց պարտականության գիտակից նոր եկեղեցականներով»:

Այժմ Արևմտյան Եվրոպայի հայկական եկեղեցիներում ծառայում են տ. Սերովբե և տ. Պսակ արքեպիսկոպոսները, տ. Զգոն և տ. Հակոբ եպիսկոպոսները, տ. Մեարոպ, տ. Գյուտ, տ. Ներսես, տ. Դավիթ ծայրագույն վարդապետները, յոթ վարդապետներ, ութ քահանա հայրեր. «կրոնավորի պարտականության գիտակցությունը հոգևոր կյանքի աշխուժություն մը ստեղծած է մեր ժողովրդին մեջ»:

Եկեղեցական, հոգևոր կյանքի այս խոստումնալից վերելքին ու զարթոնքին զուգընթաց յուրաքանչյուր թեմում և յուրաքանչյուր եկեղեցու հովանու տակ հոգևորականության և եկեղեցու վարչական մարմինների հետաքրքրության կենտրոնում են եղել միշտ

հայերեն լեզվի ուսուցման և կրոնական գիտելիքների միօրյա դասընթացների կազմակերպումը:

Հաղորդագրության մեջ շնորհակալությամբ է հիշվում այս նպատակով Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության տարեկան ուրոշ մի գումարի հատկացումը:

«Արևմտյան Եվրոպան իբրև տիրախմած թեմ, մշտական և սերտ հարաբերության մեջ եղած է Մայր Աթոռ ս. Էջմիածնի և անոր արժանընտիր գահակալ Ամենայն Հայոց կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Վազգեն Առաջինի հետ, որ իր այցելություններով, սրբատառ կոնդակներով, օրհնության գիրերով և իր հայրապետական գնահատանքներով միշտ խանդավառած ու ոգևորած է մեր հավատացյալ ժողովուրդը՝ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվո սիրով և մայր հայրենիքի հաւուսչդիմություններով:

Ժողովը այս առթիվ հանուն Արևմտյան Եվրոպայի ժողովուրդին և եկեղեցիներուն իր անվերապահ հավատարմությունն ու որդիական սերը կհայտնե Նորին Սուրբ Օծության, երկար և արդյունավոր գահակալության տարիներու մաղթանքներով, ի պաշտառություն հայ եկեղեցվո և Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի»:

Ֆրանսիայի և Արևմտյան Եվրոպայի մեր բոլոր եկեղեցիները իրենց հոգևոր հովիվներով և վարչական մարմիններով միշտ եղբայրական և սիրալիր հարաբերությունների մեջ են հայ կաթողիկե և հայ ավետարանական համայնքների հետ և «համագլխին հանգամանք ներկայացնող դեպքերու առիթով համերաշխ գործակցությամբ աշխատած են», ինչ որ ողջունելի է և քաջալերական:

Նման սիրալիր և էկոմենիկ ոգով հարաբերություններ պահվել են նաև քույր եկեղեցիների հետ, այդ թվում՝ Ֆրանսիայի կաթոլիկ, հույն և ռուս օրթոդոքս եկեղեցիների և այլ հարանվանությունների և կրոնական համայնքների հետ: «Անոնց պաշտոնական հանդիսություններում միշտ մասնակցած է մեր եկեղեցին՝ ի հայտ բերելով քրիստոնեական սիրտ և գործակցության համերաշխ ոգին»:

Հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպիսկոպոսն իր բովանդակալից տեղեկագրի վերջում գնահատանք և շնորհակալություն է հայտնում բոլոր հոգևորականներին իրենց պարտաճանաչության, կարգապահության և նվիրված պաշտոնավարության, ինչպես նաև եկեղեցիների վարչական մարմիններին, որոնք մեծ գոհողությամբ և նախանձախնդրությամբ իրենց թանկագին ծամանակն ու բարոյական օժանդակությու-

նը ի սպաս եմ դնում հայ եկեղեցիների պայծառության համար:

Տ. Սերոբյան արքեպիսկոպոսն իր քովանդակալից տեղեկագիրն ավարտում է հետևյալ հուսադրիչ հաստատումով.

«Վերջին տարիներու ընթացքին մեր եկեղեցիները ավելի լավ կազմակերպված վիճակ մը կենդանացան, սրբազան արարողությունները կկատարվին միշտ ավելի վաղելույ և վաճմ կերպով, և մեր ժողովուրդը և նույնիսկ երիտասարդներ ավելի հետաքրքրություն ցույց կու տան եկեղեցիին հանդեպ, միշտ զգալի բազմությամբ ներկա գտնվելով սրբազան արարողություններուն»:

Ժողովը մեծ գոհունակությամբ լսելուց հետո հայրապետական պատվիրակի տեղեկագիրը, «երախտագիտությամբ արձանագրեց անոր աշխատանքն ու նվիրումը մեր ժողովուրդին հոգևոր զարգացման և եկեղեցիներու պայծառության համար»:

Կարճ դադարից հետո ժողովը անցնում է օրակարգի հարցերի քննարկմանը: Առաջին հարցն էր մովսիսի և եկեղեցական վարչության հայրաքերությունների խնդիրը:

Օրակարգի սույն հարցի շուրջ տեղի է ունենում մտքերի աշխույժ փոխանակություն և ընդունվում համապատասխան որոշում:

Հաջորդ օրը, չորեքշաբթի, ամսի 14-ին, գումարվում է ժողովի երկրորդ նիստը, անսկիզբ ժամը 10-ին:

Երկրորդ նիստի օրակարգի հարցն էր. «Հայ եկեղեցվո՞ւ ե քույր եկեղեցիներու հարաբերության խնդիրը, էկումենիկ շարժումը»:

Նիստում հայրապետական պատվիրակ սրբազանը տալիս է մի շարք լուսաբանություններ, բացատրում հայ եկեղեցու մասնակցությունը եկեղեցիների համաշխարհային խորհրդին և անում գործնական թելադրություններ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ եկեղեցիների միության հարցի առթիվ գրած սրբատառ կոնդակի ոգով (1965 թ. հունիսի 4):

Օրակարգի սույն կարևոր և այժմեական հարցի շուրջ հանգամանորեն արտահայտվում են բոլոր ժողովականները՝ հիմք ունենալով հայրապետական կոնդակը, և օգտակար ու անհրաժեշտ են գտնում «քրիստոնեական սիրո և համագործակցության ոգիով մասնակցել եկեղեցիներու միության շարժումներուն, միշտ հավատարիմ և անխաճախնդիր մնալով մեր եկեղեցվո ինքնադրոշմ նկարագրին և մեր նախահայրերու հավատքին և վարդապետության»:

Նույն օրը, կեսօրից հետո, գումարվում է ժողովի երրորդ և վերջին նիստը, ուր քննության են առնվում օրակարգի մնացած հարցերը.

«ՀՀԱԿԱՐԿԱՆ օրակարգի մնացյալ հարցերը, հովվին և ծուխերու հարաբերությունները, այցելություններ, տնօրհներ»՝ այլ գործնական խնդիրներ, եկեղեցիներու ընկերակցության կանոնագիրներու միօրինակությունը և կրոնական կեդրոնական նվիրապետության կապվելու անհրաժեշտությունը»:

Օրակարգի հարցերի քննության ավարտին ժողովը «հաճելի և նվիրական պարտականություն մը զգաց արձանագրելու իր երախտագիտական և հավատարմության ջերմ զգացումները հանդեպ անպետական ձորանայի ազնիվ ժողովուրդին, ֆրանսական բարեխնամ կառավարության և իր իմաստուն նախագահ Ժորժ Պոմպիդուին»՝ մեր ժողովուրդին և եկեղեցիին նկատմամբ ցույց տրված մարդասիրական զգացումներուն, և իրեն հատուկ լայնախոհ և միշտ բարյացակամ վերաբերմունքին՝ և բարեմաղթություններ Զրաճապի բարգավաճման և անոր հավերժական փառքին համար»:


Ժողովն ավարտում է իր աշխատանքները ժամը 18-ին, հայրապետական պատվիրակ սրբազանն ուր «Պահպանիչ»-ով և խմբովին ելաված «Հայր մեր»-ով՝ արձանագրելով, որ «խորհրդակցական սույն ժողովը այնչափ շինիչ և արդյունավոր եղավ, որ փափագ հայտնվեցավ որպեսզի ամեն տարի տեղի ունենան նման հանդիպումներ»:

Երեկոյան ժամը 18.30-ին հնչում են Փառիզի հայոց ս. Հովհաննես Մկրտիչ սուսը-նորդանիստ եկեղեցու զանգերը:

Հայրապետական պատվիրակ սրբազանի գլխավորությամբ ժողովի մասնակից բոլոր հոգևորական ու աշխարհական ներկայացուցիչները եկեղեցական թափոթով սուսնորդվում են եկեղեցի և մասնակցում Հսկումի արարողությանը:

Այնուհետև Փառիզի հայոց Մայր եկեղեցու վարչությունը, ի պատիվ ժողովի բոլոր մասնակիցների, Յար ճաշարանում ողջերթի ընդունելություն է կազմակերպում, ուր խանդավառ մթնոլորտում փոխանակվում են հառեր՝ շեշտելով կրկին անգամ նման խորհրդակցական ժողովների գումարման անհրաժեշտությունը ու օգտակարությունը:

Ընդունելությունը եզրափակում է տ. Սերովյան արքեպ. Մանուկյանը, հանուն Հայոց Հայրապետի օրհնում բոլոր ներկաներին, թելադրում, որ նույն նվիրումով շարունակեն գործել իրենց համայնքներում հայ եկեղեցու պայծառության և մեր ժողովրդի հոգևոր կյանքի առաջիկ զարգացման համար, Մայր Աթոռ ս. Էջմիածնի և նրա արժանընտիր զահակալի՝ Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հովսեփականության և սրբնությանը ներքո:



ՀԱՆԳԻՍ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄԱՇՏՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹԱԶԻՐՅԱՆԻ
(1895—1973)



Սույն թվականի ապրիլի 9-ի երեկոյան, երկարատև հիվանդությունից հետո, 78 տարեկան հասակում, վախճանվեց Մայր Աթոռի միաբան տ. Մաշտոց եպիսկոպոս Թաշիրյանը:

Հանգուցյալ Մաշտոց սրբազանը (ավագանի անունով՝ Դավիթ) ծնվել է 1895 թվականի դեկտեմբերին Կեսարիա նահանգի (Թուրքիա) Կարմիր գյուղում, ծառայողների ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում:

Այնուհետև պատանի Դավիթը 1912—1915 թվականներին սովորել է Կեսարիայի ս. Կարապետ վանքին կից հոգևոր դպրոցում:

Նա 1915—1920 թվականներին կրել է ծանր զրկանքներ և, մի կերպ ազատվելով եղեռնից, բնակություն հաստատել Փարիզում, ուր հետևում է իրավաբանական և պատմագիտական դասընթացների:

Ապա մինչև 1947 թվականը Փարիզում և Լիբանանում աշխատել է որպես հաշվապահ և դատապաշտպան:

1947 թվականին հանգուցյալը ներգաղթել է Հայաստան, բնակություն հաստատել Երեվանում և մինչև 1955 թվականը իր մասնագիտությամբ աշխատել Երևանի տարբեր հիմնարկներում:

1955 թվականին նա գալիս է Մայր Աթոռ և ձեռնադրվում արքեպ: Սույն թվականի հոկտեմբերին ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովում ընտրվել է Մայր Աթոռի Վերստուգիչ հանձնաժողովի անդամ:

1958—1960 թվականներին նա եղել է

Մայր Աթոռի միաբանական սեղանատան վարիչը:

1959 թվականի հոկտեմբերին պատրաստել և վեհափառ Հայրապետին է ներկայացրել վարդապետական իր ավարտաճառը՝ «Ս. Էջմիածինը դարեր շարունակ ժողովրդի հետ և ժողովրդի համար» թեմայով և ստացել վարդապետական աստիճան ու 1960 թվականին ընտրվել Ծիրակի թեմի առաջնորդ:

1962 թվականի հոկտեմբերի 14-ին եպիսկոպոս է ձեռնադրվել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ձեռքով:

Հանգուցյալ սրբազանը Մայր Աթոռում կատարել է բարեխղճորեն իրեն վստահված պարտականությունները, իսկ Ծիրակի թեմում ծավալել է թեմական, քարոզչական, շինարարական և արդյունավետ աշխատանքներ՝ ի պայծառությամբ Ծիրակի թեմի եկեղեցիների և համայնքների: 1971 թվականի նոյեմբերին տ. Մաշտոց սրբազանը հիվանդության պատճառով հրաժարվում է թեմական իր պաշտոնից և վերադառնում Մայր Աթոռ՝ իր կյանքի վերջին օրերը խաղաղությամբ անցկացնելու այնտեղ:

Տ. Մաշտոց սրբազանը թե՛ Մայր Աթոռում և թե՛ թեմական իր պաշտոնավարության ընթացքում միշտ եղել է հավատավոր, ավանդապահ հոգևորական, իր օրինակելի կենցաղով, համեստությամբ, սիրվել և՛ իր մոլովորդից, և՛ իր շրջապատից՝ արժանա-

նալով նաև Հայոց Հայրապետի բարձր գնահատությամբ:

Հանգուցյալի անյուր ապրիլի 11-ի երեկոյան դրվում է ս. Գալանե եկեղեցում: Հաջորդ օրը աստարագում է տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը, իսկ վերջին օծումը կատարում է Մայր Աթոռի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոքյանը և իր դամբանականում խոսում հանգուցյալի ուսանելի, մկրյալ կյանքի ու գործունեության մասին:

Ապրիլի 12-ին, ժամը 13-ին, վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հանգուցյալի թաղման արարողությունը, որից հետո անյուրն ամփոփվում է ս. Գալանե վանքի միաբանական գերեզմանատանը:

Ապրիլի 15-ին, կիրակի օրը, Ծաղկազարդի տոնին, Մայր տաճարում, վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ տ. Մաշտոց եպս. Թաջիրյանի: Վեհափառ Հայրապետը, առարողությունից առաջ, իր խոսքի մեջ վեր հանեց հանգուցյալ սրբազանի արժանիքները՝ որպես հավատավոր, կարգապահ ու համեստ հոգևորական, որը «յիւրովսանն» ծառայեց Մայր Աթոռ ս. Էջմիածնին, Հայաստանյայց առաքելական եկեղեցուն, մանավանդ Ծիրակի թեմում՝ իր առաջնորդության տարիներին:

Հանգիստ նրա ոսկորներին:





Մ Ա Հ
ՊՐՈՖ. ՀԱԿՈՔ ԾՈՒՈՒՅԱՆ ՍԻՐՈՒՆՈՒ
(1890—1973)



Վեհափառ Հայրապետի անունով Մայր Աթոռում ապրիլի 9-ին Բուխարեստի հայոց առաջնորդարանից ստացված հեռագիրը գուժով էր անվանի և մեծավաստակ մտավորական, «Էջմիածին» ամսագրի աշխատակից Հ. Ծ. Սիրունու հանկարծակյան մահը, որը տեղի էր ունեցել ապրիլի 7-ին, գիշերվա ժամը 12.30-ին, Բուխարեստի իր բնակարանում:

Հ. Ծ. Սիրունու մահով ծանր ու մեծ կորուստ էր կրում հայ գրականությունը ու հա-

յագիտությունը, և մեր ազգային-հասարակական կյանքից անժամանակ հեռանում էր մեծանուն և հայրենասեր տիպար մի գործիչ:

Հայոց Հայրապետը, որ Բուխարեստում երկար տարիներ սրտագին բարեկամությամբ կապված էր հանգուցյալի հետ, ծանր սրտով բաժանում էր մեր գրականության և ժողովրդի կրած մեծ վիշտը, Բուխարեստ, Ռումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիրոսյանին ապրիլ 9 թվակիր ուղղած Իր հետևյալ ցավակցական հեռագրով.

«Խոր վշտով կողբանք մահը Հակոբ Սիրունիին, որուն տաղանդը ավելի քան վայրսում տարիներ շողաց հայ գրականության, պատմագիտության և ազգային-հասարակական կյանքի մեջ՝ թողնելով արժեքավոր ժառանգություն:

Հայոց մայր հողեն, սուրբ Էջմիածնեն և Մեր սրտեն վերջին ողջույն և օրհնություն անոր պաշտոն հիշատակին և վաստակին: Աստված թող լուսավորե հանգուցյալի հոգին և սուրբ Հոգով մխիթարե թուրքիդ:

Կիրակի հանդիսավոր հոգեհանգիստ Մայր տաճարի մեջ»:

Հ. Ծ. Սիրունին թողել է բազմաժանր և բազմահարուստ գրական, հրապարակախոսական, հաղագիտական, պատմա-քանասիրական, թարգմանական ու հուշագրական մեծարժեք ու պատկառելի վաստակ, որն իր արժանի տեղն է գրավում հայ մշակույթի պատմության մեջ (տես «Էջմիածին» ամսագիր, 1971, հունվար, էջ 44, Մատենագիտությունը պրոֆ. Հ. Ծ. Սիրունու):

Հ. Ծ. Սիրունին վերջին մոհիկանն էր՝ հրաշքով ազատված մեր արևմտահայ մտավորական հերոսական սերնդին, որը զոհ

գնաց 1915 թվականի Ապրիլյան մեծ եղեռնին:

«Օ՛ր, մեծ մահերով հարուստ ժողովուրդ»... Իր գրչակից ու գաղափարակից տաղանդավոր ընկերների՝ Դանիել Վարուժանի, Սիամանթոյի, Ռուբեն Զարդարյանի, Ռուբեն Սևակի և մեր մյուս գրագետների նահատակության անլուելի մորմոքը սրտում, Հ. Ծ. Սիրունին անկոտրուկ հավատքով և լավատեսությամբ ապրեց, ստեղծագործեց և շարունակեց նրանց կիսատ թողած գրական ժառանգությունը ու հայրենասիրական գործունեությունը: Հ. Ծ. Սիրունին եղավ այն երջանիկ ու միակ վերապրողը իր սերնդի, որ

վակի, Տիգրան Զյուկյուրյանի և շունչը հայոց պատմության:

Հ. Ծ. Սիրունին աչքը փակեց մխիթարված, ազգային հպարտության ազնիվ զգացումով, ի տես մեր հայրենի վերածննդյան:

Հ. Ծ. Սիրունին, որպես մտավորական ու իրավ հայ մարդ, իր հոգու թուր թելերով ջերմորեն կապված էր նաև ս. Էջմիածնի առաքելության և Ամենայն Հայոց Հայրապետի եկեղեցաշեն ու հայրենամկեր գործունեության հետ:

Երկար ընդմիջումից հետո, Հ. Ծ. Սիրունին, «Էջմիածին» ամսագրի խմբագրության սիրալիր հրավերով, 1960 թվականից սկսած



Մի պառլ թաղման արարողությունից

իր աչքերով տեսավ նահատակ իր ընկերների իրականացած շքեղ երազը՝ ազատագրված Սովետական Մայր Հայաստանը և թանց ուխտի եկավ Երևան՝ համբուրելու նրանց անմեռ հիշատակին կանգնեցված հուշարձանը Ծիծեռնակաբերդում ու ուղագուրվելու հայրենի մեր ավագ ու կրտսեր սերնդի մտավորականների հետ, որոնց գրական ու ստեղծագործական վաստակի, ինչպես նաև մեր ժողովրդի վերածնված կյանքի ու հաղթական երթի մեջ կար հորովելը Կոմիտասի, փոթորկահույզ ոգին Սիամանթոյի, հայկյան հանճարը՝ Վարուժանի, կորույն և արդարամիտ խոսքը Զուհրապի, բնորոշ ու սիրաթաթախ ընթաց Ռուբեն Սև-

վերադարձավ իր սիրած գիր ու գրականության և մինչև իր կյանքի վերջը իր սրտագին, մնայուն աշխատակցությունը քերեց Մայր Աթոռի սրբապատկերներին և ուր ստորագրեց ԺԹ դարի վերջին և Ի դարի առաջին երեսնամյակի մեր մեծ եկեղեցականների, այդ թվում՝ Մատթեոս արքեպ. Օրմանյանի, Եղիշե արքեպ. Դուրյանի, Գարեգին արքեպ. Խաչատրյանի կյանքի ու մատենագրական վաստակի մասին սքանչելի վերլուծական գրական անլուրկներ, ինչպես նաև այլ մեծարժեք պատմական, դասական հուշագրություններ, ինչպիսիք են՝ «Կոմիտասին հետ», «Եղեռն և իր պատմությունը», «Պոլիս և իր դերը» և այլն:

Անդամիս վրա է Հ. Ծ. Սիրունու՝ խմբագրությանն ուղարկված վերջին արտատու գրությունը, որը կրում է «Ջրույցներ ճեմարանի սաներուն հետ» վերնագիրը, 17 մեքենագրված էջ միայն և 20 գլուխներից քառակցած ծրագիրը այդ «գրույցներուն»:

1970 թվականին Հ. Ծ. Սիրունին երբ գրություն էր Մայր Աթոռում, որպես Հայոց Հայրապետի հյուրը, հանդիպում և զրույց ունեցավ մեր ճեմարանի սաների հետ և Բուխարեստ վերադառնալուց հետո գրի է առել ամբողջական ձևով «պատմության մեզ հայթայթած փաստերուն վրա զրույցներուն իր շարքը», իրեն հատուկ ընդգրկումով, թափով ու ծավալուն խորությամբ:

«Էջմիածին» ամսագրի հաջորդ համարներից մեկում հանգամանորեն պիտի անդրադառնանք Հ. Ծ. Սիրունու մատենագրական, պատմագիտական, հայագիտական մեծ ու արժեքավոր վաստակին:

Ապրիլի 11-ին Բուխարեստի հայոց ս. Հրեշտակապետաց եկեղեցում կատարվում է պրոֆ. Հ. Ծ. Սիրունու թաղման կարգը և ապա թաղումը հայոց գերեզմանատանը: Թաղման արարողությանը ներկա են լինում ոչ միայն հայ, այլև ռումին տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ: Դամբանական խոսք են ասում՝ Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի թեմակալ առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը, Ռումինիայի դավանությանց տեսչության տնօրեն Նիցը Պասկուն, արևելագիտության ինստիտուտից՝ պրոֆ. Կորինա Նիկոլեսկուն, Բուխարեստի պատմության թանգարանի դիրեկտոր Պետրե Դաքեն, թեմական խորհրդի կողմից՝ դոկտ. Գրիգոր Բամբուլչյանը, պատմաբան, պրոֆ. Աուրելյան Սաչերդոցեանում, պատմության ինստիտուտի կողմից՝ պրոֆ. Աուրել Դեչեյը, Բուխարեստի հայ եկեղեցու վարչության կողմից՝ Համազասպ Թումանյանյանը, և «Նոր կյանք» թերթի խմբագրության կողմից՝ Անդրանիկ Անտոնյանը:

1973 թվականի ապրիլի 15-ին, կիրակի օրը, Ծաղկազարդի տոնին, Մայր տաճա-

րում, Վեհափառ Հայրապետի հանդիսարությանը, կատարվում է ի հիշատակ Հ. Ծ. Սիրունու հոգեհանգստյան մասնավոր պաշտոն, որին ներկա են լինում Մայր Աթոռի ողջ միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, մայրականքի պաշտոնությունը և քաղում մտավորականներ՝ Մատենադարանից, ակադեմիայից, համալսարանից, որոնք եկել էին իրենց վերջին հարգանքը մատուցելու արդյունաշատ գիտնականին, բազմամիտ տեսլիկաբանին ու անաչառ պատմաբանին:

Հոգեհանգստյան արարողությունից առաջ Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Ավագ սեղան, «Սուրբ Էջմիածնեն, հայոց հողեն և Մեր սրտեն վերջին ողջույն և օրհնություն» տալու Հ. Ծ. Սիրունու «պայծառ հիշատակին և վաստակին»՝ հանգուցյալին բնութագրելով որպես «հայ ժողովրդի ընտրյալ զավակներեն մեկը ու քացառիկ շնորհներով օժտված, հայրենասեր, մեծավաստակ մտավորական մը, որուն տաղանդը ավելի քան վաթսուն տարիներ շողաց հայ գրականության, պատմագրության և ազգային-հասարակական կյանքին մեջ»:

Այնուհետև Մայր տաճարի կամարների տակ հնչում է «Գթա՛, Տեր, ի հոգիս մեր մնջեցելոց» հոգեհանգստյան սքանչելի մեղեդին ու ապա՝ «Ի վերինն Երուսաղեմ»-ը, և Հայոց Հայրապետը, հուզված ու վշտակիր, «Հոգւոց» է արտասանում պրոֆ. Հ. Ծ. Սիրունու հիշատակին:

Հոգեհանգստյան արարողությունից հետո Հայոց Հայրապետը Վեհարանում ընդունում է հայրենի մտավորականության ցավակցությունը, պրոֆ. Հ. Ծ. Սիրունու մահվան տխուր աղիթով:

Հ. Ծ. Սիրունու անունն ու հիշատակը միշտ վառ կմնան նրան ճանաչողների սրտերում, իսկ նրա մատենագրական, գրական, գիտական 85-ամյա վաստակը երախտագիտությամբ կհիշվի հայ մշակույթի մեծ ու վաստակավոր երախտավորների շարքերում:

Ա. Հ.





ԷԿՈՒՄԵՆԻԿ

ԿՅԱՆՔ

ԼՈՒՐՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐԻՑ

Ի ր ա թ

ՀԱՄԱՏՆՂ ԱՂՈԹՔ ՎԱՍՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱԾԽԱՐՀԻ

Սույն թվականի հունվարի մեկին, «Խաղաղության օր»-վա առթիվ, Բաղդադի իսլամ և քրիստոնյա համայնքների բազմաթիվ ներկայացուցիչներ իրենց կրոնական պետերով համախմբվել են տեղի քաղղեացիների կրոնական կենտրոնի ընդարձակ սրահում՝ միասնաբար իրենց աղոթքը մատուցելու առ Աստված՝ վասն խաղաղության աշխարհի:

Սույն արարողությանը իր մասնակցությունը է բերել նաև տեղի հայ առաքելական եկեղեցին:

Համատեղ աղոթքին ներկա լինելու համար հրավիրվել են զանազան երկրների դիվանագիտական ներկայացուցիչներ:

Արարողության ընթացքում զանազան լեզուներով ընթերցվել են խաղաղությանը նվիրված համապատասխան հատվածներ Ավետարանից և Ղուրանից: Այնուհետև կարդացվել է Պողոս Զ Պսալի պատգամը՝ նվիրված «Խաղաղության օր»-վան:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ «ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՕՐ»-ՎԱՆ

Բաղդադի քաղղեացիների կրոնական կենտրոնի սրահում հունվարի 26-ին տեղի է ունեցել Էկումենիկ հանդիսություն՝ նվիրված «Միությունական օր»-վան:

Հանդիսությանը ներկա են եղել տեղի զրեթե բոլոր քրիստոնյա համայնքների ներկայացուցիչները, դիվանագետներ և մուսուլմանների հոծ բազմություն:

Հանդիսության ծրագրին իրենց մասնակցությունը են բերել զանազան համայնքների ներկայացուցիչները ուղերձներով, ընթերցումներով կամ երգեցողությամբ: Տարբեր լեզուներով կարդացվել են միության գաղափարն արտահայտող հատվածներ Ավետարաններից, առաքելական թղթերից և իսլամականներից:

Բաղդադի հայ եկեղեցու դպրաց դասի կատարմամբ երգվել են «Սուրբ, սուրբ»-ը և «Հայր-մեր»-ը, որոնք խոր տպավորություն են թողել ներկաների վրա:

Այնուհետև քրիստոնյաների միության գաղափարին նվիրված անգլերեն տպավորիչ մի ճառով հանդես է եկել Իրաքի պապական նվիրակ մոնսենյոր Ժան Ռյուպը:

Հանդիսությունը փակվել է քաղղեացիների Պատրիարք Տ. Պոլուս Շեխոյի օրհնության աղոթքով:

ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՈԹՔ

Մարտի 2-ին Բաղդադի հայ առաքելական առաջնորդանիստ եկեղեցում Իրաքի քրիստոնյա կանանց կազմակերպության նախաձեռնությամբ տեղի է ունեցել միջհամայնքային հասարակաց աղոթք, որին ներ-

կա են եղել համայնքների հոգևոր պետերը, մտավորականության ներկայացուցիչներ և ժողովրդի հոծ քաղաքություն:

Հանդիսությունը քաց է արել Իրաքի հայոց առաջնորդ տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը անգլերեն ողջույնի խոսքով: Այնուհետև արաբերեն, ասորերեն, հայերեն և ֆրանսերեն լեզուներով հատվածներ են կարդացվել Ավետարանից:

Հավաքական աղոթքի տեքստը, որը կազմված է եղել արաբերեն լեզվով, մեջ ընդ մեջ արտասանվել է ժողովրդի կողմից:

Հանդիսության ընթացքում հայ եկեղեցու դպրաց դասի կատարումով հնչել են արաբական, ասորական և հայկական հոգևոր երգեր:

Այնուհետև կրոնական հոգեշունչ մի ճառով հանդես է եկել ասորական ուղղափառ եկեղեցու առաջնորդ տ. Զաքա եպիսկոպոսը:

Միջհամայնքային հասարակաց աղոթքի սույն հանդիսությունը փակվել է Իրաքի լատին եկեղեցու առաջնորդ տ. Էոնեստ Նիարի եպիսկոպոսի օրհնության խոսքով:





ՀՈՒՐԵՐ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՑ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԻՄԵՆ
ՊԱՏՐԻԱՐԹԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՆՈՐ
ՀՈՒՍՏԻՆԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԿԻՊՐՈՍԻ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱԿԱՐԻՈՍԻՆ

Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Պիմենը սույն թվի մարտի 18-ին Երբ Հուստինիայի և Համայն Կիպրոսի արքեպիսկոպոս Մակարիոսին ուղարկել է մի հեռագիր, որի մեջ ուս եկեղեցու պետը իր զարմանքը և վրդովմունքն է արտահայտում Կիպրոսի եկեղեցու Սինոդի երեք անդամների «Երբ տխուր արարքների» առթիվ, որոնց նպատակն է երկպառակություն առաջացնել Կիպրական եկեղեցու ծոցում և այդպիսով ջլատել Մակարիոս արքեպիսկոպոսի սրբազան գործունեությունը:

«Մենք դատապարտում ենք այսպես կոչված այն որոշումը,—ասված է հեռագրում,—որով Դուք ազատ եք արձակվում Ձեր արքեպիսկոպոսական պարտականություններից՝ այն համարելով միանգամայն անարդարացի, կանոնական ու չունեցող մի որոշում, և պաշտպանում ենք Ձերդ Գերազանցությանը, որպես Կիպրոսի սուրբ եկեղեցու միակ օրինական ներկայացուցիչ»:

• •

Սույն թվի փետրվարի 28-ին Մոսկվայի պատրիարքարանի եկեղեցական արտաքին հարաբերությունների բաժնի նախագահի

տեղակալ, Ջարայիսկիի եպիսկոպոս Խրիզոստոմը ընդունել է Հելսինկիի անգլիկան համայնքի հոգևոր հովիվ, Մեծ Բրիտանիայի անգլիկան եկեղեցու կանոնիկոս դոկտ. Էրիկ Ստեյսլիսին և զրույց ունեցել նրա հետ:

• •

Մարտի 18—24-ը Աթենքի մոտ գտնվող Պեցտեի վանքում տեղի են ունեցել եկեղեցիների համաշխարհային խորհրդի աշխատանքային խմբերի նիստերը՝ նվիրված «Մարդկանց հետ դիալոգ կենդանի հավատի և գաղափարախոսության շուրջ» թեմային:

Նիստերի ընթացքում կատարվել է մտքերի լայն փոխանակում քրիստոնյաների, մահմեդականների, թուդայականների և աշխարհիկ գաղափարախոսության ներկայացուցիչների միջև:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Սույն թվականի մարտի 5—8-ը Ավստրիայի Գետցիս քաղաքի մոտ, կաթոլիկ երիտասարդության կենտրոն Վ. Արթուրստում, տեղի է ունեցել Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի (Ե. Ե. Կ.) աշխատանքային կոմիտեի ընդլայնված խորհրդակցական նիստը՝ «Հիսուս Քրիստոս եկեղեցու վկայությանը ու ծառայությանը մեջ այսօր Եվրոպայում» թեմայով:

Կոնֆերանսին մասնակցել են Արևելյան ու Արևմտյան Եվրոպայի եկեղեցիների ալիքի բան քառասուն հերկայացուցիչներ՝ Գալաթիոյան պրոֆ. Յ. Անդեուի (Ֆրանսիա) և ղեկավարությամբ Ե. Ե. Կ.-ի գլխավոր քարտուղար ղոկտ. Գ. Վիլյամսի:

Գլխավոր քարտուղարի բացման խոսքից հետո վերոհիշյալ թեմայի շուրջ լայն մեկնաքանություններով հանդես է եկել պրոֆ. Ն. Ջարդուտսկին (Լեհիզգրադ):

Այնուհետև ժողովականները բաժանվել են 4 աշխատանքային խմբերի, որոնցում քննարկվել են հետևյալ ենթաթեմաները:

1. Այժմեականություն, անընդհատելիություն և նորոգյալ եկեղեցի:
 2. Ձեռնադրյալ հոգևորականությունը և նրանց գործունեությունը եկեղեցում:
 3. Մեր քարոզությունը ու ժամասացությունը մեզ շրջապատող աշխարհի հարաբերակցության մեջ:
 4. Եկեղեցիների վկայությունները և նրանց ծառայությունը Եվրոպայի խաղաղությանը՝ կրոնադավանական, քաղաքական և գաղափարական տարբերությունների լույսի տակ:
- Յուրաքանչյուր ենթաթեմայի շուրջ կարդացվել են զեկուցումներ, և ծավալվել է մտքերի աշխույժ փոխանակություն: Այս աշխատանքային խմբերը պատրաստել են իրենց աշխատանքների արդյունքներն արտացոլող 4 ամփոփագրեր, որոնք կներկայացվեն առաջիկա «Նիքոբո 7» համաժողովին:

Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Ռուս պրավոսլավ եկեղեցու հրավերով Մոսկվայում մարտի 20—28-ը տեղի է ունեցել խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի (Խ. Հ. Կ.) աշխատանքային կոմիտեի հերթական նստաշրջանը:

Բացի Խ. Հ. Կ.-ի անդամ եկեղեցիների ներկայացուցիչներից, նստաշրջանի աշխատանքներին, որպես հյուր, ներկա են եղել նաև քրիստոնեական զանազան եկեղեցիների և ՍՍՀՄ-ում կրոնական տարբեր համայնքների ներկայացուցիչները:

Բացման աղոթքը կատարել է ռումին օրթոդոքս եկեղեցու միտրոպոլիտ Նիկոլայ Կոռնեանուն:

Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Պիմենի անունից ժողովականներին ողջունել է Մոսկվայի պատրիարքարանի եկեղեցական արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ միտրոպոլիտ Յուլիանային:

Խ. Հ. Կ.-ի աշխատանքային կոմիտեի սույն նստաշրջանի գլխավոր թեման է եղել «Քրիստոնեական խաղաղության խնդիրներ

ըն խաղաղության ժամանակաշրջանում և լարվածության թուլացումը Եվրոպայում»:

Նստաշրջանում ընդունվել է Եվրոպայի ամվտանգության հարցի մասին հատուկ բանաձև, որ ընդգծվում է եկեղեցիների ու քրիստոնյաների գործունեության անհրաժեշտությունը՝ ի պաշտպանություն Եվրոպայի խաղաղության և համագործակցության:

Նստաշրջանի ավարտին Մոսկվայի և Համայն Ռուսիո Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքը, ի պատիվ ժողովի մասնակիցների, կազմակերպել է ընդունելություն:

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ
ՄԵԼԸՈՒՐՆԻ «ՔՐԻՔԵԹ ՔԼԸԲ»
ՄԱՐԶԱԴԱՇՏՈՒՄ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՑ
ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ՍՈՒՐԲ ՊԱՏՐԻԿ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

